





19 AUG 2006

թ. ԲԱՐԵ.ՑԻ, Չափական ԹԵԳԼՈՐԵՍՆՅԱՅԻ

ՀԱՐԱՅԵԼ ՕՐԻՆ
ԵՒ ԵՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱԳԻԲԸ

ԳՐԱՅԻ
ԵՊՐԵՏ Առ. Վահ. ԳԵՂԱՄԵՍԻՆԻՑ

Протоіер. Егишэ Гегамянцъ. Исраель Ори и его политичес-
кое дѣятельность. (Перепеч. изъ жур. „Овітъ“).

Թ. Գ. Ա.
Տիպ. Ч. А. Эриванцова, Баку.
Հայրան Ն. Երևանցեանի
1914

6855

9(47.925)
0-42

05 SEP 2011
05 OCT 2011

ԿՐ

ԽՄՐԱՅՔԵԼ ՕՐԻՆ
ԵՒ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(Բագուի զբական—գեղարվեստական ակումբի հայկական բաժ-
նում՝ փնտրվարի 8-ին՝ կարդացւած դասախոսութիւն).

Ա.

1711 թւականի օգոստոսի վերջերում,
կարճատես հիւանդութիւնից յետոյ՝ 55 տարե-
կան հասակում, Առարախանում մեռաւ և հայ
եկեղեցու բակում թաղւեցաւ այժմեան հա-
յութեան—բանաստեղծի տսածով—«աչքից հե-
ռացած, մտքից մոռացւած» մի հայ մարդ, որ
իր պատանեկան օրից սկսած մինչև իր վեր-
ջին շունչը անդուր, անձնուէր եռանդով ու աշ-
խատանքով, անյոդողդ հասատակամութեամբ,
կենդանի և ջերմ հաւատով ու յուսով անձնա-
տուր եղաւ իր հայրենիքի ազատութեան սուրբ
գործին: Եւ թէպէտ նա իր նպատակին չհա-
սաւ, բայց նա ինքը առաջինը հանդիսացաւ, որ
ժէ, դարձւմ հայկական հարցը բարձրացնելով և
եւրոպայի քրիստոնեայ պետութիւնների առաջ-
դնելով՝ ինչպէս իր ժամանակակիցների, նոյն-
պէս և յետագայ հայ սերունդի սրտերում ար-
ծարծեց և հրահրեց հայրենիքի ազատագրու-
թեան որբազան գաղափարը: Եւ հէնց այս մէ-
կը, հէնց այս մեծ ծառայութիւնը միայնակ,
բաւական է ու դ հայրենասէրի անունը և յի-

շատակը երախտագիտութեամբ և օրհնութեամբ
յիշելու համար:

Այդ մարդը, յարգելի պարոնայք և տիկնալք,
Մեծ Սիւնիքի հպարտ լեռների այդ խիզախ
զաւակը՝ իսրայէլ Օրին էր, որի մասին է լի-
նելու իմ այսօրւայ զեկուցումը՝ բաժանւած
երկու մասի: Առաջինով ես ձեզ կը ծանօթա-
ցնեմ համառօտակի Օրիի կենսազրութեան և
գործունէութեան հետ: Իսկ երկրորդով կը վեր-
լուծեմ և կը քննեմ Օրիի քաղաքական ծրագիրը:

Բ.

Իմ նախընթաց զեկուցումից*) զուք հաճեցաք
տեսնել թէ՝ Ռուբինեան հարսառութեան վեր-
ջն առարիներում կաթոլիկ կղերը որ աստի-
ճան առաջ էր գնացել իր ոտընձգութիւնների
մէջ դէպի հայ ազգային եկեղեցու իրա ունք-
ները:

Տեսաք թէ բանը մինչեւ այստեղ էր հա-
սել, որ Հայոց եկեղեցում և հայոց թագաւո-
րըն օծուելիս՝ աջ կողմին ունէր պապի կարգի-
նալին, որ օծման ծէու կատարում էր նախա-
պէս լատինական արտօղութեամբ և կիպրո-
սից հետը բերած լատին եկեղեցւոյ միւռոնով՝
իսկ յետոյ՝ թագաւորի ձախ կողմին կանգնած
Հայոց կաթողիկոսը՝ իր հայացի աղօթքներն էր
մըմնջում:

*) Հին Հայաստանի հարեւան պետութիւնների քաղաքա-
կան յարարերութիւնները գէպի Հայերը մինչեւ ժէ, դարս.

ՀԱՅ և սրտ նման միքանի յաջողութիւն-
ներով քաջալերւած, Վատիկանի ագենտ վար-
դապետները՝ կիլիկիայից զրոն տւին Պարսկա-
հայաստան՝ այստեղ ևս պարզելու իրենց մարդ-
որսական զրօշակը:

Գ.

Ակզբում հայերը շատ սիրով ընդունեցին
նրանց իբրհ քրիստոնեայ դաւանակիցների, և
իրենց ձեռքից եկած օգնութիւնը չխնայեցին,
բանալով նրանց հանդէպ իրենց եկեղեցիների
գոները, թոյլատրելով, որ նրանք աղօթեն, բե-
մից «Աստուծոյ խօսքը» քարոզեն և նոյնիսկ
պատարագ մատուցանեն:

Եւրոպայից ստացած մեծամեծ դրամական
նպաստներով՝ միսիօներները հետզհետէ Պարս-
կահայաստանում դպրոցներ բացին, տպարան
հիմնեցին, կրօնական զրքեր տպեցին ու ցրուե-
ցին, լոտօ կոչուած խաղը հնարեցին, որի
օգնութեամբ կրօնական զիտելիքներ էին սո-
վորեցնում իրենց խաղընկերներին, հիւանդա-
նոցներ բաց արին և ժողովրդին ձրի գեղ ու
բժշկութիւն սկսեցին մատակարել և այն:

Շատ բնական է, որ այս օմենը մեծ դրա-
մական էին ձեզւիտների ձեռքում, իրենց յե-
տին նպաստակի յաջողութեան համար:

Եւ յիրաւի, նրանք հասան իրենց նովատա-
կին և բաւականին որս ձգեցին իրենց տուկա-

նը թէ աշխարհիկ և թէ հոգեոր դտսակարպի
հայերից:

Այսպէս ահա կազմւեցաւ ունիթոռների
բանակը Պարսկահայաստանում:

Եւ ահա այստեղ էլ սկսւեցաւ այն եր-
ևոլթը, ինչ որ տեղի էր ունեցել Կիլիկիայում.—
Կրօնական երկառակութիւն հայ ժողովրդի
մէջ:

Այստեղ էլ առաջ եկան հայ ազատամիտ-
ների և պահպանողականների կուսակցական
սուր պայքարները:

Վերջիներիս թիւը անհամեմատ շատ էր,
որոնք թէ խօսքով թէ գրչով և թէ գործով
յաջողութեամբ դիմագրում էին ունիթոռների
գաղտնի ու յայտնի առաջարկութեանը, — որ էր
ենթարկւել Հոռմի պապի իրաւասութեանը:

Պահպանողականների այս ուժգին գիմա-
դրութեան հանդէպ՝ միսիօներների գործը՝ վեր-
ջերում զգալի կերպով սկսել էր կաղալ:

Այս երեցի պատճառն ըմբռնելու կամ
չկարողանալով կամ չկամենալով միսիօներները
Հոռմ ուղարկած իրենց տեղեկագրերում հայե-
րի գիմագրութեան յաջողութիւնը «սատանայի
ներշնչման» էին վերագրում:

Դ.

Անձամբ և առտեղեաւն ճեղսիտներին դի-
մագրելը բաւական չհամարելով՝ պահպանողա-

կաններից մէկը — Աղէքսանդր կաթողիկոսը մի
կոնդակով գիմեց Կղէմէս Խլորդ պապին և ման-
րամանորէն նկարագրելով միսիօներների հա-
կաքրիստոնէական արարքները, մահմեղական-
ներին թողած՝ բրիստոնեայ հայերին գայթա-
կղեցնելն ու երկպառակելը՝ խնդրում էր պա-
պին՝ սահմանարել իր վարդապետներին:

Շատ հասկանալի է, որ իր այդ դիմումով
Հայոց կաթողիկոսը միմիայն իր պարզամտու-
թիւնը երկան հանեց, ուրիշ ոչինչ:

Ճեղսիտներն էլ աւելի բազմապատկեցին
իրենց եռանդը նորանոր ընկերներ հրաւիրելով
Երոպայից:

Եւ որպէս զի այդ ընկերների գալստեամբ
ժողովուրդը առաւել ևս չգալթակղի, — ճեղսիտ-
ները Նահապետ կաթողիկոսին առաջարկեցին
ստորագրել այն նամակին, որով իրեւ թէ նա
ինքը մեջնորդում է, որ պապը մի քանի նոր
վարդապետներ ուղարկէ ի լուսաւորութիւն հա-
յերի:

Նահապետ կաթողիկոսը մերժեց յիշեալ ա-
ռաջարկը: Սակայն երկիւղ կրելով ճեղսիտնե-
րի գաւերից և որոգայթներից, — որոց մէջ, առ-
հասարակ, շատ ճարպիկ և ընդունակ էին նը-
րանք, — առ երեսս խոստացաւ երկու եպիսկո-
պոս ուղարկել Հոռմ, անձամբ անձին ներկայա-
նալու պատվին և հարկ եղածը խօսելու:

Կաթողիկոսի երեսանց խոստումը իսկա-
կան խոստում համարելով՝ ժողովուրդը Աթո-

ոեց վեր բերեց նրան, տապալեց:
Սակայն ճեղւիտները մեծ գումարով կա-
շառեցին Պարսից աւագանւոխն, Շահին էլ շրեղ
ընծաներով գրաւելով, կարողացան վերջ ի
վերջոյ, Նահապետին փոխարինող կաթողիկոսին
տապալել տալու և Նահապետին նորից նստեցնե-
լու հայրապետական աթոռի վրայ:

Ե.

Նահապետ կաթողիկոսի այս դէպքը լաւ
առիթ տւեց ճեղւիտներին այնուհետև հայե-
րին հնթարկել իրենց ազգեցութեանը կողմնակի
ձամապարհով պարսիկ կառավարութեան մի-
ջոցաւ:

Եւ թէպէտ Եւրոպայից առաջին անգամ
Պարսկահայաստան գալիս միսիօներները այնաե-
ղից զանազան թագաւորագունների յանձնարարա-
կաններ բերել էին Շահի վրայ, և այդ յանձնարարա-
կանների շնորհիւ էր, որ ցարդ ազտաօրէն գոր-
ծում էին Շահի երկրում: Սակայն այժմ ան-
հրաժեշտ էին ուրիշ բովանդակութեամբ հա-
մակներ:

Եւ ահա, հետզհետէ, Շահի դիւնը լըց-
ւեցաւ Թրանսիայի Լուդովիկոս ԽՎI-ի, Գեր-
մանական կայսեր, Լեհաստանի Օգոստոս Սաք-
սոնացու, Հռոմի Պապի, և նոյնիսկ Վենետիկի
հասարակապետութեան նախագահի նամակնե-
րով, որոց բոլորի բովանդակութիւնը նոյն

էր,—հովանաւորել կարողիկ հայերին, ազա-
տել նրանց լուսաւորչական հայերի հաղածան-
ից, այս ու այն աւտոնուրինը շնորհել հի-
ւանց,—կարողիկացածներին:

Օգտւելով պարոկական այն օրէնքից, ո-
րով մահմեդականացած հայը մեռած քրիստոնեայ
ազգականհայից մնացած կալւածին ժառանգ էր
համարւում,—Լուդովիկոս ԽIV թագաւորը չէր
խղճահարւել և չէր ամաչէլ 1667-ին Յունի-
սի 23 թւակիր մի նամակով խնդրել Շա-
հաբասից մի և նոյն օրէնքը գործադրել և կա-
թողիկութիւն ընդունած հայի նկատմամբ:

Զ.

Այս նամակները Շահին ներկայացնելով
ճեղւիտները համոզում էին նրան թէ որքան
օգտակար կլինի իր տէրութեան համար Եւրո-
պիու այդ գիհապետների խնդիրները յարգելով
գրաւել նրանց համակրութիւնը:

Մասնաւրապէս համոզում էին Շահին պա-
պի համակրութիւնը ճեռք բերել,—պապի, որի
մի խօսքը օրէնք է բոլոր Եւրոպական թագա-
ւորների համար:

Եւրոպիոյ թագաւորների և պապի այս
նամակներն, ճեղւիտների խորհուրդ ու լոր-
դորներն և առատութեամբ մասուցւած նէր-
ներն չէին կարող, ի հարկէ, ապարդիւն անց-
նել:

Եւ զարմանալու ոչինչ չկայ, երբ Շահը և
աւագանին սկսեցին փայփայել կաթողիկ հայե-
րին, նրանց նախամեծաբութիւն ցոյց տալ լու-
սաւորչականների հանդէպ, նրանց խնդիրնե-
րին արագօրէն ընթացք տալ և ալն:

Այս ամենը շատ հրապուրիչ էին լուսա-
ւորչականների համար: Եւ ահա նրանց մէջ
առաջ է գալիս մի նոր հոսանք, — մտնել Երո-
պիոյ յրիսունեայ պետորիհւններից մէկի հովա-
նաւորուրեան տակ, ընդունելով չոռմայ պա-
պի գերիշաանուրինն ու իրաւասուրիննը ի-
րանց վրայ, այսինքն ճիշտ այն, ինչ որ տեղի
էր ունեցել Կիլիկիայում:

Պոպէի տրամադրութիւնից օգտուելով ճե-
զվիտները սկսեցին լուսաւորչական հայերի
ականջն ի վեր փսփսալ, որ եթէ նրանք պապի
իրաւասութիւնն ընդունելով՝ միանան իրանց
կաթողիկ եղբայրների հետ, այն ժամանակ ոչ
միայն հաճելի կը լինին Շահի աչքում կաթողիկ-
ների նման, այլ, մինչեւ անգամ, իրանց ան-
կայս, հայկական քագաւորուրինը կունենան
և ընդ ճիշտ կազատւեն պարսկական լծից:

Հայերի ուղածն էլ հէնց այդ էր:

Է.

Ճշմարիտ է նրանց վերջին, — Ռուբինեան
թագաւորութիւնը թէն վերջացած էր, բայց
անկախութեան ոգին դեռ խսպառ չնշւած չէր

հայ սրտերից:

Միւս կողմից կիսանկախութեան ներկա-
յացուցիչներն, — Խամսայի մելիքներն, գեռ այ-
սօր էլ իրանց աչքի առաջն էին և, համեմա-
տաբար, բարեկեցիկ կեանք էին վարում իրանց
ժողովուրդներով Արցախի լեռների լանջերում,
ունենալով իրանց ներքին խնդնավարութիւնը,
իրանց կաթողիկոսը, — Աղւանիցը, — որ թէկ էջ-
միածնի իրաւասութեան տակն էր գտնւում,
բայց հարիւր անգամ նրանից ապահով վիճակ
և կացութիւն ունէր իր հօտի հետ:

Այսպէս խորհում ու խորհրդածում էին
Արարատեան աշխարհի հայերն և էջմիածնի կա-
թողիկոսն, որոնք մի կողմից ենթակայ էին
Պարսից շահերի, միւս կողմից Երեանի խանե-
րի կեղեքումներին:

Այսպիսի խորհուրդով և ցանկութեամբ
տարւած 1678 թւականին էջմիածնում Զու-
ղայեցի Յակոբ կաթողիկոսի նախագահութեամբ
մի խորհուրդ կայացաւ 12 հոգու մասնակցու-
թեամբ: Նրանցից վեցը հոգեորական էին, վե-
ցը աշխարհական:

Ժողովը որոշեց Յ հոգեոր և Յ աշխարհիկ ան-
ձինքներից իաղկացած՝ մի պատգամաւորու-
թիւն ուղարկել Եւրոպա կաթողիկոսի զիսաւո-
րութեամբ՝ խնդրելու այնտեղի քրիստոնեայ
թագաւորին Հայաստանը Պարսից Ճեռքից ազա-

տելու*): Բնիսրուած աշխարհականներից մէկն
էր իսրայէլ անունով մելիքը: Սակայն նա, մա-
սամբ ծերութեան, մասամբ էլ Խաչէնում ունե-
ցած իր կալւածից չհեռանալու պատճառաւ,
հրաժարւեց, բայց իր փոխարէն Օրին անու-
նով որդուն նշանակեց, որ 1659-ին ծնած լի-
նելով այդ ժամանակ, ուրեմն, 19 ատրեկան մի
պատանի էր:

Բ.

❖ Պատգամաւորութիւնը Եւրոպա մեկնեց
Կ. Պօլսի վրայով: Դժբախտաբար Յակով կա-
թղթիկոսը այնտեղ վախճանեցաւ**):

Առանց ազգի պետի կամ ներկայացուցչի—
կաթողիկոսի, Եւրոպա անցնելն ապարդիւն գործ
համարելով՝ պատգամաւորները յետ դարձան:

Իսկ պատանի Օրին՝ Վենետիկ գնացող հայ
վաճառականների հետ գնաց այնտեղ, ուր

*) Յակով կաթողիկոսից մօտ մի դար առաջ
այդպիսի ցանկութիւն յայտնել էին էջմիածնի եր-
կու կաթողիկոսները ևս: Բայց այդ ցանկութիւնը մը-
նացած էր երեսի վրայ:

**) Մահւան անկողնում պառկած կաթողիկո-
սին ճեղլիանները մի թղթի ստորագրել տւին, որով
իրեկ թէ էջմիածնի կաթողիկոսը արդէն կաթողիկու-
թիւնը ընդունած պրծած է: Եւ կամենում էին կա-
թողիկ եկեղեցու ծէսով թաղել սակայն չյաջողեցան:
Այդին ԽVII դարում էր: Մի այդպիսի խաղ ներ-
կայ գարում ևս ուղեցին անել, ինչպէս յայտնի է, Մըր-
բագան Օրմաննանի հետ:

միայն Յ ամիս մնալով անցաւ Թրանսիա ևայն-
տեղ զինւորական ծառայութեան մէջ մանե-
լով՝ մտանակից եղաւ պատերազմի, գերի ըն-
կաւ, ազատւեցաւ, և մինչև կապիտանի աս-
տիճան ստացաւ:

Տասներկու տարուց յետոյ՝ Օրին անցաւ
Գերմանիա և մի քանի քաղաքներում 4 տա-
րի կօմիսարի պաշտօն վարելով՝ առիթ ունե-
ցաւ Պֆալցի իօհան Վիլհէլմ իշխանի հետ ծա-
նօթանալու, մինչև անգամ բարեկամանալու
հետը:

Եւ դրա հետեանկքն այն եղաւ, որ Օրին*):
իշխանի առաջ նկարագրելով 16 տարի առաջ
էջմիածնից Եւրոպա մեկնող պատգամաւորու-
թեան պատմութիւնն ու շարժառիթները՝
լինդրեց իշխանին յանձն առնել Հայաստանի
ազատութեան ձեռներեցութիւնը և ապագայու-
մըն էլ՝ հայերի թագաւորը դառնալ:

Երիտասարդ իշխանին շատ գրաւիչ և հա-
ճելի թւաց Օրիի առաջարկութիւնը. նրանից աւե-
լի հաճելի թւաց իշխանի խոստովանահօրը—Պօ-
տիա անունով ճեղլիտին: Սա Օրիի պատմած-
ներից լսելով, որ էջմիածնի կաթողիկոսը և

*) Օրին իր նամակների մէջ շարունակ ստորա-
գրում է «Ասրայէլ Օրի»: Եւ այդպէս էլ նա յայտնի
է միը զրականութեան մէջ: Այդ անւամբ էլ ևս նը-
րան նշանակիցի զեկուցմանս վիրնագրում, սակայն
այսուհետև բաւականանալու եմ սոսկ իր անունով:

հայոց մելիքները պատրաստակամութիւն են ունեցել ազգովին Հռոմայ պատի գերիշխանութեան տակ մտնել, — սկսեց իր հերթում Պֆալցի իշխանի փառասիրութիւնը զրգուել և մեծապէս աջակցելով Օրբին, վերջապէս յաջողեցաւ նրա յօժարութիւնը ստանալ.

Եւ որովհետեւ անհրաժեշտ էր նախապէս Հայաստանից հաւաստի և ստոյդ տեղեկութիւններ ստանալ, ուստի որոշեցաւ Օրբին Հայաստան ուղարկել տալով նրան իշխանի կողմից նամակներ յանուն էջմիածնի և Աղւանից կաթողիկոսների և հայոց մելիքների:

Թ.

1698 թւականի օգոստոսի 2-ին Օրբին Դիւլգօրք քաղաքից, ուր ապրում էր ընտանիքով, անցաւ Վիեննա Աւստրիոյ Լէօպոլդ կայսեր ներկայանալու, ինչպէս որ յանձնարարել էր Պֆալցի իշխանը — կայսեր քենակալը:

Սակայն կայսրը իր պալատականներից մէկի միջոցաւ յայտնեց Օրբին, որ ինքը Պֆալցի իշխանին համամիտ չէ, հիմնւելով գլխաւորապէս թիւրքերի հետ նոր կնքւած Գարւովիցի դաշնագրի վրայ:

Ուստի Օրբին, առանց կայսրին տեսած լինելու, շարունակեց իր ճանապարհը, և մեծամեծ նեղութիւններից յետոյ, ուր ուրեմն, հասաւ Երևան 1699 թւի ապրիլի 4-ին:

Էջմիածնի կաթողիկոսը՝ Նահապէտ Եղեացին՝ ոչ միայն պապին հպատակելու առաջարկը մերժեց, այլ նաև հայկական իշխանութեան վերականգնումը անհաւասալի համարեց:

Այս պատճառով Օրբին սուս ու փուս անցաւ գնաց Գանձասար՝ Աղւանից կաթողիկոսի մօտ, որ միաբաններին ժողովի հրաւիրեց, ուր Օրբին — ըստ իր ասութեան — մի խոշոր և կարևոր ազգային գործի մասին մի յայտնութիւն էր անելու:

Ժողովը կայացաւ ի ներկայութեան կաթողիկոսի և հինգ արքեպիսկոպոսների:

Ժ.

Առանց իր բուն նպատակը յայտնելու և առանց հետը բերած նամակը կաթողիկոսին յանձնելու՝ Օրբին կամեցաւ Գանձասարցիների տրամադրութիւնը շօշափել նախապէս: Ուստի ժողովականներին յայտնեց, որ ինքը զալիս է Երապայի ամենամեծ և հզօր թագաւորներից մէկի կողմից: Որ այդ թագաւորը թէ ծագմամբ և թէ հարստութեամբ դաշնակցից է երկրագնդիս առաջնակարգ կայսրների հետ:

«Այդ թագաւորը, — շարունակեց Օրբին, — կրօնական զգացմունիցից թերադրուած, ցանկանում է օգնութեան համել հարստահարւած քրիստոնեաներին՝ հարկաւոր համարւած չափով՝ դրամական նւէրներ անելով յօդուա-

եկեղեցիների, վաճառքերի, հիւանդանոցների և ուրիշ Աստուածահամոյ հիմնարկութիւնների:

«Եւ որպէսզի նւիրելիք գումարները կանոնաւոր կերպով իրենց նպատակների վրայ գործադրւեն, — կրօնասէր թագաւորը իր կողմից ճարտարապետներ, կօմիսարներ և հոգեորանձիք կուղարկէ Հայաստան»:

Սրանից յետոյ Օրին անցաւ հայ և կաթոլիկ եկեղեցիների մէջ եղած խտրութեանը: Յաւ յայտնեց, որ հայ եկեղեցին մեկուսացած է ապրում և խորհուրդ տւեց հետեւ Հայաստանի ո. Գրիգոր Լուսաւորչի օրինակին, որ իրւեւ թէ իր հայրապետական իշխանութիւնը ո. Պետրոս առաքեալի յաջորդ և Յիսուս քրիստոսի փոխանորդ Հոռմի պապիցն է ստացել և այլն:

ԺԱ.

Կաթողիկոսը Օրիի առաջարկութեան առաջին մասը, ինչպէս առում են, հալած իւղի տեղը նորունելով՝ պատասխանեց, որ ինքը չնորհակալութեամբ կընդունէ մեծահոգի և ջերմեռանդ թագաւորի կողմից լինելիք դրամական նւէրները և իսկական նպատակին կը գործադրէ: Սակայն այդ նւէրը նրան պիտի յանձնուի գաղտնի կերպով, առանց դրսեցի և կողմակի անձանց մասնակցութեան, որպէսզի

ալարսիկների կողմից վաճառքը կասկածանքի ու հալածանքի չենթարկւի:

Գալով Հոռմի պապին հպատակւելու առաջարկին՝ կաթողիկոսը և ժողովականք դըրականապէս մերժեցին:

Այսպիսով Օրին Գանձասարումն էլ յաջողութիւն չունեցաւ: Բայց նա չյուսահատեցաւ:

Գանձասարից նա մեկնեց Մեծ Սիւնիքի Անգեղակովթ գիւղը (այժմեան Զանգեզուրի գաւառում) և իջեանեցաւ մելիք Սաֆրազի տանը, որ 1678 թւին Յակոբ կաթողիկոսի կազմած ժողովին մասնակցած էր:

Անգեղակովթում Օրին բացեց իր ճանապարհորդութեան բուն նորատակը և իր ծրագիրը: Սաֆրազ սելիքը շրջակայ 10 մելիքներին իր մօտ ժողովի հրաւիրեց: ↲

ԺԲ.

Ժողովականք նորութեամբ ընդունեցին Օրիի առաջարկը:

Նրանց միջին էր նաև ո. Յակոբայ վանահայր Տիգրանեան Մինաս վարդապետը, որին իր հետ վերցնելով Օրին մեկնեց Եւրոպա, առնելով հետը՝

1) Հոռմի պապի անունով գրւած մի աղերագիր, որով մելիքները պատրաստակամութիւն են յայտնում իրենց ժողովրդի հետ միասին՝ ընդունել կաթոլիկութիւն, աւելացնե-

լով որ էջմիածնի և Աղւանից կաթողիկոսների ստորագրութիւնների չլինելը աղերսագրի տակ՝ նրանց փառասիրութեանը պէտք է վերագրել:

2) Յանձնարարականներ կամ հաւատարմագիզ, որով մելիքները Օրինն և Մինաս վարդապետին իրենց օրինաւոր և լիազօր ներկայացուցիչներ են յայտարարում:

3) Մի գրութիւն Պֆալցի իշխանին, որին մելիքները երդմանք հաւատացնում են, թէ իրենց հայրենիքի ազատութեան համար իրենք ոչինչ խնայելու չեն, ոչ մի զոհաբերութեան առաջ կանգ առնելու չեն:

4) Մի աղերսագիր ևս ոռւսաց Պետրոս Մեծի անունով գրեցին մելիքները, արտօնելով Օրինն Ռուսիայի հետ ևս բանակցելու, եթէ հարկն սախեց:

Այս թղթերից առաջին երկուքը, այն է՝ պապին և Պֆալցի իշխանին ուղղածները՝ պատրաստել և գրել էին Հայաստանի ունիրուները:

ԺԳ.

Այս գրութիւններով Օրին Պոլսոյ վրայով վերաբարձար Գերմանիա: Բայց Պֆալցի իշխանի հիւանդութեան պատճառով ստիպուեցաւ 6 ամիս սպասել:

Առաջանալուց յետոյ իշխանը Օրին Լէօ-

պօլդ կայսեր մօտ ուղարկեց Վիեննա:

Կայսրը կիսարքերան յօժարեցաւ նպաստել Հայաստանի ազատութեանը: Ուստի և Օրին թախանձանքին զիջանելով, մելիքներին մի յուսագրական նամակ գրեց: Միենոյն ժամանակ Լէօպոլդը Օրին ոռւսաց կայսեր մօտ ուղարկեց նրա համաձայնութիւնը ևս ստանալու, որովհետեւ գերմանական զօրքը Ռուսաստանի միջովներ գնալու Հայաստան: Իր կողմից ևս Պֆալցի իշխանը մի փոքրիկ յանձնարարական նամակ ևս տուեց Պետրոս Մեծի վրա հետեւել բովանդակութեամբ:

«Հայաստանի կառավարիչներն ու իշխանաւորները ցանկանալով պարսկական լծի տարկից գուրս գալ, Հայոց Պոօշ իշխանական ցեղից սերւած Խսրայէլ Օրի անունով իրենց մի հայ պատգամաւորի միջոցաւ մեր օգնութեանըն են զիմել, խնդրելով որ մենք նրանց երկիրը զօրք ուղարկենք, որ միանալով հայկական զօրքի հետ՝ կարողանան Հայաստանը աղաւանել:

«Յանկանալով հայերի սոյն խնդիրը յարգելու՝ ես խնդրում եմ նեղութիւն յանձն առնել և ստուգել, թէ հայերի այս խնդիրը, որ իրեւ մեծ զաղսնիք հաղորդւած է ինձ, որ աստիճան արդարացի է և իրագործելի:

«Եթէ Զեր մեծութիւնը, շարունակում է իշխանը, — հայերի այս խնդիրը իրագործելի կը համարէք և կը համաձայնէք թոյլատրել ինձ

Զեր երկրի միջով զօրք անցկացնելու, — այն ժամանակ ես իմ համաձայնութիւնը կը տամ հայերին»:

Գալով Լէօպոլդ կայսեր՝ նա էլ խնդրում էր ոռւսաց կայսրից՝ հայ հայրենասէր Օրին բարեհաճութեամբ ընդունել և նրան ունկնդրւթիւն շնորհելով լսել նրա խնդիրը:

ԺԴ.

Այս նամակներով 1701 թւականի Յունիսի 30-ին Օրին Ուռւսաստան մտաւ, ուր նախ Սմոլենսկում և ապա Մոսկվայում, երկար բարակ, բանաւոր հարց ու փորձի ենթարկեցաւ, գրաւոր բացատրութիւններ ու ցուցումներ տըւեց, որոնցմով մի կողմից ոռւսներին հաճելի ձեռք էր մեկնում իր ծրագիրն և նախապէս Աւստրիոյ կայսեր Պֆալցի իշխանին դիմելն՝ տարբեր ձեռք էր մեկնում և միւս կողմից՝ Հայաստանի ռազմական և տնտեսական վիճակը՝ շատ միիթարական և բաւարար էր գտնում Պարսիկներին ձեռաց այնտեղից դուրս քշելու համար:

Հ Այս նախնական հարցուփորձերից յետոյ հոկտեմբերի վերջին՝ Պետրոս Մեծը ունկնդրութիւն շնորհեց Օրին որ Եւրոպալից հետը բերած ընծաներով ներկայացաւ և լաւ ընդունելութիւն գտաւ պատառում:

Ունկնդրութիւնից մի ամիս յետոյ՝ Օրին բայտնեցին, որ կայսրը հայերին օգնելու տրա-

ադրութիւն ունի, բայց ոչ այժմ, վասն զի Շեղական պատերազմով է զբաղւած:

Իսկ առ այժմ առաջարկում է, որ Պֆալցի իշխանը 3—4 գունդ զօրք, և զինուորական երկրաչափներ ուղարկէ Ուռւսաստան, որոնք ոռւսաց գեսպանութեան հետ միանալով գնան Պարսկաստան՝ այնտեղի ամրութիւնների յատակագծերն վերցնելու և ուրիշ անհրաժեշտ տեղեկութիւնները ձեռք բերելու:

ԺԴ.

Ուռւսաց կայսեր այս պատասխանը Օրին ցանկութեանը չէր համապատասխանում, բայց նա ինչ կարող էր անել:

Շատ աշխատելուց յետոյ Օրին վերջապէս յաջողւեցաւ, Քալաւին Բօյարի միջոցաւ, կայսեր կողմից նախակներ գրել տալ էջմիածնի նահապետ և Աղւանից Սիմէօն կաթողիկոսներին և Հայոց մելիքներին:

Դրանց ամենքին կայսեր բարեհաճութիւնն էր յայանում, իրանց և իրանց ժողովրդին հովանաւորութիւն էր խոսացնելու, և իրանց օգնութեան համելու յօժարութիւնն ցույց տրւում:

Այս թղթերը Հայաստան ուղարկւեցան Միքոն Վասիլեվ անունով մի հայի հետ, որ ոռւսական պաշտօնեայ էր: Իսկ Օրին յայտնե-

ցաւ, որ մինչև Վասիլեվի վերադարձը՝ կառավարութիւնը ոչ մի դրական քայլ չէ կարող անել Հայերի նկատմամբ:

Ուրախացած որ Պետրոս Մեծի կողմից գրութիւններ Հայաստան ուղարկելու նպատակը իրագործւեց, Օրին այնուհետև աշխատեց և համոզեց ուսւս արքունիքին որ աւելի նպատակայարմար կը լինէր փոխանակ եւրոպական գօրագնդերի և զինւորական երկրաչափների, սոսկ մի գեսապանութիւն ուղարկւէր Պարսկաստան՝ վաճառականութեան պատրւակով:

Իբրև թէ Օրիի գեսապանութիւնը ուղերւում է Պարսկաստանից ձիեր բերելու և Ռուսաստան վաճառելու համար:

Կառավարութիւնը Օրիի այս առաջարկութիւնը ևս ընդունելով հանդերձ՝ այնուամենայնիւ Միրօն Վասիլեի վերադարձին էր սպասում:

ԺԵ.

Վերջապէս 1703 թ. Յուլիսի 30-ին Վասիլեվը վերադաւ՝ հետը բերելով իր տարած նամակների պատասխանները:

Նահապետ կաթողիկոսի պատասխանը, առաջուայ նման բացասական էր: Իսկ Միմէօնին յաջորդող Եսայի կաթողիկոսի և մելիքների պատասխանը՝ շատ դրական, ոգեսրիշ և խոսալիալից էին:

Կաթողիկոսների պատասխաններն ուղղւած էին Օրիի և մինաս վարդապետի անունով, իսկ մելիքների պատասխանն՝ ուղղակի Պետրոս Մեծին:

Մելիքները մի նամակ ևս Գալավին Բօյարին էին ուղարկել, որով շնորհակալութիւն էին յայտնում նրան՝ Օրիին ցոյց տուած աշակցութեան համար:

Մելիքների այս վերջին նամակում մի հետաքրքիր և բնորոշ տեղեկութիւն կայ:

Նրանք Գալավինին գրում են, որ իրանք պատրաստ էին Օրիի կողմից իրան խոստացւած 20,000 սոկին այժմ և եթ ուղարկել, սակայն աւազակների երկիւղից չուղարկեցին: Ուստի փողի փոխարէն ուղարկում են մի պարտամուրհակ իրանց ստորագրութեամբ և կնիքներով:

Անա այդ պարտամուրհակը նոյնութեամբ. «Մենք մեծ Հայաստանի մելիքներս խոստացանք որ տանք Փէտր Ալէքսէւիճ Կլօվին որ ես յաջորդ Մեծին Մօսկովի թագաւորին իմ (20,000) սոկի, որ կանէ ԲՌԴ (24000) թումանն ինչ ժամանակ որ այս խորհուրդն մեր կատարի Աստուծով անպատճառ տամք և այլ աւելի ընծալ շնորհակալութեամբ շնորհեմք քո մեծ բարութեանդ փոխարէն որ կառնես այս նեղ ժամանակին»:

ԺԶ.

Կաթողիկոսների և մելիքների պատասխան-

ներն ստանալուց յետոյ՝ ուսւա արքունիքը Օրիի ցանկացած դեսպանութիւնը ուղարկեց Պարսկաստան:

Սակայն դեսպանութեան վաճառականական նպատակը այժմ զինւորական դիւանագիտական նպատակի վերածւեցաւ:

Եւ զրա համար էլ դեսպան Օրիին գնդապետութեան աստիճան տրւեցաւ:

Բայց Օրիին նախապէս թոյլատրւեցաւ, որ գնայ Դիւալաօրֆ ի տեսութիւն ընտանիքին՝ տանելով իր հետ Պետրոս Մեծի պատասխանամակներ Լէօպոլտ կայսրին և Պֆալցի իշխանին. Սրանք երկուքն էլ յայտնեցին Օրիին, որ Եւրոպայից Հայաստան բանակ ուղարկելն այլ ևս աւելորդ են համարում և միմիայն Ռուսիոյ կողմից ուղարկելիք դեսպանութիւնը նախապատիւ և բաւարար են գտնում:

Բացի զրանից Պֆալցի իշխանը՝ Օրիից վերցնելով Հայ մելիքներին՝ մի քանի տարի առաջ պապին ուղղած աղերսագիրը, իր խոստովանահօր. Պօտիաձիզուիտի ձեռքով Հոռոմ ուղարկեց (*), խնդրելով որ պապը Շահին խնդրէ նամակով որ իր քրիստոնեայ հպատակներին չնեղացնեն Պարսկաստանում:

Պօտիան բերեց պապից մի այդպիսի նամակ, որ Պֆալցի իշխանի նոյն բովանդակութիւնն ունեցող նամակի հետ՝ յանձնւեցաւ Օրիին անձամբ

*) Սխալ է ոմանց պնդածը իրը թէ Օրիին ինքն է գնացել Հոռոմ:

Շահին յանձնելու:

Այդ նամակներով Օրիին 1706 թ. հոկտեմբերին վերադարձաւ Ռուսաստան և Շահի անունով մի նամակ էլ Պետրոս Մեծից ստանալով միենոյն բովանդակութեամբ, իր շքախմբով մեկնեց Պարսկաստան:

Ժէ.

Օրիի շքախմբը բաղկանում էր 50 հոգուց, — ամեն ազգի և գիրքի, աստիճանի ու զբաղմունքի տէր անձերից, իւրաքանչիւր հոգի իր ազգային համազգեստով ու տարազով:

Բացի երեք չորս հոգի ոսներից մնացածները եւրոպացի ալ և այլ տէրութիւնների հպատակներ էին, — արհեստաւորներ, վաճառականներ, զինագործներ, ուսուցիչներ, զինւորականներ, որոնք տարիներ առաջ՝ Ռուսաստան գալով իրանց համար հաց էին ճարում իրանց մասնագիտութիւններով:

Դիսպանութեան տպահովութեան համար՝ Օրիին հետը տանում էր նաև լեռնային թնդանօթ:

Բացի զրանից նա տանում էր նաև քսաներկու հազար ոսւբլի արժողութեամբ այլ հրազենք, որոնք Ամսդերդամումն էր ձեռք բերել:

Պարսկաստանից յետ գանսալիս՝ Օրիին մտադիր էր 3—4 հարիւր, և նոյն իսկ 1000, հոգուց կազմւած հայկական մի զինւած շքախմբով

մտնել Ռուսաստան։ Այդ զինեալ շքախումբը՝
յետոյ ռուս բանակին գէպի Պարսկաստան էր
առաջնորդելու։

ԺԲ.

1707 թւին Օրին հասաւ Շամախի, ուր
ստիպւած եղաւ երկու տարի չափ սպասել, մին-
չև որ Շահից թոյլտութիւն կըստացւէր նրան
Սպահան գնալու։

Շամախւոյ խանը գրած էր Շահին թէ Մոս-
կովի թագաւորից այնտեղ մի գեսպանութիւն է
եկել, որ իր ձեռքին ունի նաև Հոռմի պապի և
գերմանական կայսեր նամակները։ Թէ գեսպա-
նութիւնը իր բազմութեամբ ու պատրաստու-
թեամբ բոլորովին տարբերում է սովորական
գեսպանութիւնից։ Թէ գեսպանութեան գլուխ
կանգնած է մի հայ, և այն էլ Պարսկաստանցի
հայ, որ, ըստ տարածւած լուրերի, Հայոց նախ-
նի թագաւորների շառաւիդներիցն է։ Թէ նա
մտադիր է միջնորդել Շահին կաթոլիկ միսիօներ-
ներին գուրս քշելու Պարսկաստանից ևայլն։ Շա-
մախւոյ խանի այս գեկուցագիրը՝ շատ շփոթեց
չիւսէին Շահին ու նրան աւագանիին։

Պարսկաստանում գտնւած եւրոպացիները՝
իրենց կամածներով և մեկնաբանութիւններով
էլ աւելի շփոթեցրին Շահին։

Օրինակի համար՝ լուդովիկոս ԺԴ.-ի կողմից
Սպահան եկած մի ֆրանսիացի, ոռւսական գես-

պանութեան զալուստը՝ միսիօներների կեանքին
սպառնացող երկոյթ համարելով, թախանձում էր
Շահին չընդունել գեսպանութեանը։ Ֆրանսիացին
ասում էր, որ ռուսաց գեսպանութեան ձեռքում
եղած հոռմի պապի և եւրոպական թագաւոր-
ների նամակներն անշուշտ կեղծ են։

ԺԹ.

Միւս եւրոպացիները հաւատացնել էին աշ-
խատում Շահին, թէ Հայոց մէջ մի մարդարէու-
թիւն կայ, որ մի օր նրանց թագաւորութիւնը
պէտքէ վերականգնի ռուսաց հովանաւորութեան
ներքոյ*）։

Թէ արդ մարդարէութիւնը կատարւում է
ահա գեսպանի անունի առաջին երեք տառերով,
— Israel,— il sera roi, այսինքն «նա թագաւոր է
լինելու»։

Դարձեալ պարսիկ աւագանիներից մէկը,
Միր Վեյս անունով, գարմանալի ճշտութեամբ և
մանրամանութեամբ այնպիսի կարծիքներ յայտ-
եց Շահին Հայոց մելիքների ձգտումների և մեր-
ձաւոր ու հեռաւոր նապատակների վերաբերու-
թեամբ, Վրաստանի թագաւորի հետ միացած
Պարսից գէմ գործելու վերաբերութեամբ ևայլն,

*) Պիտրոս Մհծին ներկայացրած գեկուցագրում
Օրին ինքն էր յիշատակել այս մարդարէութեան գոյու-
թեան մասին։ Ինձ յայտնի չէ Օրին ինքն էր նարել
այս, թէ գուցէ ինքն էլ լսել էր ուրիշներից։

ինչ որ Օրին, իրու իիս մեծ զայտնիի, արտայալաել էր Մոոկւայում, արտաքին գործոց գոլեկին կամ նախարարութեանը նախ քան Պետրոս մեծին ներկայանալն^{**}):

Իր կարծիքները Շահի առաջ դնելուց յետոյ Միր Վէյսը, այնուամենայնիւ, խորհուրդ տուեց Շահին ընդունել դեսպանութեան և առերես սիրաշահել նրան:

Հրամանագրւեցաւ Ջամախւոյ Խանին՝ թոյլ տալ դեսպանութեանը Սպահան գալու, ուր Օրին հասաւ, վերջապէս 1709 թւականի աշնանը՝ Մոոկվայից գուրս գալուցը ուղիղ երկու տարի յետոյ:

Ի.

Շահը Օրին ընդունեց վայելուչ պատիներով և Պետրոս Մեծի նամակին էլ պատասխան գրեց այս բովանդակութեամբ թէ իր քրիստոնեայ հպատակների մէջ մի կարգ յիմարներ կան, որ իրանց արժանի պատիմը պիտի կրէին: Բայց այժմ ի յարգանո Յարի միջնորդութեան Շահը կըներէ այն յիմարներին, այն պայմանաւ որ նրանք այս եւս յիմարուրիններ չանեն:

Շահի այս նամակով^{***)} Օրին վերադարձաւ

*) Անգեղակոթի ժողովի որոշման մասին՝ պարսկաց արքունիքը կարող էր տեղեկութիւն ձեռք բերել իր լրտեսների միջոցաւ: Բայց թէ նա որտեղից ճիշտ տեղեկութիւն ունէր Մոոկվայումը Օրին խօսածների մասին, — ահա այս է զարմանալին,

**) Պապի և Աւտորիոյ կայսեր գրած պատասխաննամակներն ես Շահը Օրին յանձնեց, բայց նրա մա-

մուսաստան: Եւ ահա այս եղաւ նրա մեծադորդ դեսպանութեան խղանկ արդիւնիլը:

Պարսկաստանից յետ դառնալիս Օրին ճանապարհից մի քանի նամակներ գրեց ուուս արքունի աւագանիի իրան ծանօթ այս ու այն անհատին:

Այդ նամակներով Օրին յայտնում էր, որ ինքը թաղաւորի (Պետրոս Մեծի) համար 31 հատ ընտիր ձիեր է բերում հետք:

Մետաքսագործութեան արհեստին հմուտ 20 գերգաստուն (60 հոգի) է գաղթեցնում, որոնք ուուսահպատակութիւն են ընդունելու, որ Պալթաւայի յաղթանակը Շւետացւոց վրայ՝ Պետրոս Մեծի համբաւը շատ բարձրացրեց Պարսկիների աչքում, որ Պարսկաստանում եղած եւրոպացի գործակալներն ու վարդապետները (ճեղփակներն) շատ անպիտան և երկերեսանի մարդիկ են և, առհասարակ, սաստիկ ուուսատեաց, որ Օսմանեան Տէրութիւնը Պարսկաստանի հետ մըտերմանալ է ուզում, ու Պարսիկները ուզում են ուուսաստանում իրանց դեսպանն ունենալ, որ ինքը, Օրին վճռել է Դիւլտօրֆից իր կնոջ ու երկու տղայ զաւակներին վոխադրել ուուսաստան, ուուսաց հպատակութիւն ընդունել և ուուս ծառայութեան մէջ մտնելով մինչկ իսկ իր արիւնը

հւանից յետոյ նամակները Մինաս վարդապետի ձեռքն անցան: Նա խնդրեց ուուս արքունիքից թոյլատրել իրեն, որ գոնէ պապի նամակը անձամբ տանի և յանձնի: Բայց ոչ թոյլատրեցին, ոչ էլ նամակները վերագարծրին:

թափել ոուս թագաւորի փառքի ու անուան համար ևայլն ևայլն:

Բայց Հայոց գործի, իր ծրագրի իրագործան մասին Օրին ոչ մի խօսք չէ զրում, ոչ մի ակնարկ չէ անում:

Այլ բաւականանում է այսքանով թէ իր գեապանութեան հետեւանքի մասին անձամբ կը զեկուցանէ թագաւորին։
Ահա Օրիի իրեն խօսքերն՝ ուղղած թագաւորին ռժառայդ երանու երկրումն ինչ որ արարեալ եւ և ասացեալ ամենն պատճառով է և առանց պատճառի բան չեմ արարեալ. հիմայ չեմ կարող գրել. երբ որ ոսդ համրութելու հասայ, ամենն արզ կանեմ։

Թագաւորից առաջ էլ միենոյն մտքերն արտայայտում էր Օրին՝ Նիգօվոյ նաւահանգամից դուքս Գոլօվկինին ուղղած նամակի հետեւալ խօսքերով «քաջաւորին և յո հրամանոցդ յայշ-մի է թէ ի՞նչ պատճառաւ եմ ևս այս երկրումն։ Բան և խօսի շատ ունեմ յամենայն կողմանէ չեմ կարող գրել. երբ որ Ասուծով ծառայութեանդ հասայ, բերանով պիտի արզ անեմ։»

Դժբախտաբար Օրին թագաւորին չկարողացաւ տեսնել։ Որովհետեւ, — ինչպէս զեկուցմանս ոկզբում յիշեցի, — Աժդախանում մեռաւ և իր հետ զերեզման տարաւ ինչպէս իր զեկուցումը Ռուսաց թագաւորին, այնպէս և իր փայփայած ծրագիրը, — Հայրենիքի ազատութիւնը։

ԻԱ.

Պետրոս Մեծին ներկայանալու դիտաւորութեամբ Օրիի հետ Ռուսաստան էր գնում Ազւանից Եսայի կաթողիկոսը երկու եպիսկոպոսի հետ, որոնք Օրիի մահւան պատճառաւ երեքով միամին Աժդարխանից յետ դարձան։

Եսայի կաթողիկոսի Ռուսաստան գնալու նրապատակը՝ ռուսաց հովանաւորութիւնը ընդունելն էր։

Օրիի մահւամբ Պֆալցի իշխանը և աւարիոյ կայսրը՝ մոռացան Հայկական հարցը։

Գալով Պետրոս Մեծին՝ նա էլ Պալթաւայի յաղթութիւնից յետոյ 1711 թւին, — Օրին մեռած տարին, — թիւրքիայի հետ պատերազմի բանելով՝ մազ մնաց, որ Բըռուտ գետի ափին գերի ընկնի թիւրքաց ձեռքը։

Այսպիսով Պետրոս Մեծը ևս մոռացաւ, — զոնէ առժամանակեայ կերպով, — Հայկական հարցը։

ԻԲ.

Ակնածանքով և յարգանքով գլուխ վէրբերելով Օրիի և նրա յիշատակի առաջ իբրի մի մեծ հայրենասիրի, զբաւակելով նրա հաստատակամութիւնն ու անձնւիրութիւնը, որոնցմավ ամեն տեսակ զրկանք, տանջանք և չարչարանքներին տանելով անշեղ կերպով իր սուրբ նպատա-

կին էր դիմում, ի սրտէ ցաւելով որ մի այդպիսի բազմաչարչար՝ գաղտփարական մարդու հանգստարանի տեղն անդամ մենք չենք իմանում, — այժմ ես անցնում եմ, յարգելի պարոնայք և տիկնայք, իմ զեկուցման երկրորդ մասին, — Օրիի քաղաքական ծրագրի վերլուծմանն ու քննութեանը:

Ի՞՞.

Նախ քան Օրիի ծրագրին անցնելով՝ ես կամենում եմ պարզել այն հարցը, թէ ճշմարիտ է արդեօք, որ Օրին Պոօշ իշխանի տոհմից էր սերւում, ինչպէս որ գրում էին իրենց աղերսագրերում Անգեղակոթում ժողոված մելիքները, և ինչպէս որ հաւատացնում էր ինքը՝ Օրին:

Պոօշեանների տոհմը՝ 1232 թւականում մի աւետարանի վերջում գրւած յիշատակարանի համաձայն՝ ծագում է Ե. դարու Վարդանանց պատերազմին մասնակցող Բակ իշխանից, Խաչքակեան ազգանունով:

Բայց դա աւանդութիւն է տոհմի ծագման մասին և ուրիշ աղբիւրներով հաստատւած չէ:

Պատմութեան մէջ նրանք ասպարէզ են դալիս ԺԳ, դարու սկզբում և ծագմամբ Փոքր Սիւնիքի Խաչէն գաւառիցն են:

Գանձասարի դիմաց գտնուող Գեառնաքար զիւղը նրանց ընազաւառի կենդրոնն է և Հաւապտուկը՝ նրանց գլխաւոր սրբավայրն ու հան-

գստարանը:

Այդ տեղից Վասակ Խաչքակեան Զաքարիա և իվանէ սպասալարների օրով՝ ժառանգութիւն իրաւունքով՝ կողմակալ է հաստատւում Նախիջևանի գաւառի Շապհալունիք գաւառում և Վայոց Չորի մի մասում:

Վասակ օգնում է Զաքարիային նւաճելու այդ երկիրները:

Վասակի որդին է Պոօշ, որ մօա 1224—1287 թւերին ժառանգում է հօր իշխանութիւնը և Կիրակոս Գանձակեցի պատմիչից կոչւում է «աշխարհաշէն»: Որովհետև շինել է Գեղարդի վիմափոր տաճարները, և Թանհատի վանքը Վայոց Չորում:

Նա մասնակցել է շատ պատերազմների:

Պոօշի որդիներն ու թուները պատմութիւնում յայտնի են որպէս վանքեր ու մատուռներ շինողներ, ազգային տեղական ժողովում մասնակցողներ, պատերազմ վարողներ: Նրանք ուղիղ գծով հասնում են մինչեւ ԺԳ, դարու կէսերը, ապա ընդհատում և ապա՝ երրորդ անգամ հանդէս են գալիս ԺԳ, դարում*):

Այսպիսով՝ Օրիի հայր մելիք Խարայէլը թէն ժամանակաւ շատ հեռու չէ Պոօշ իշխանի շառաւիդներից, սակայն ոչ մի պատմական փաստով

*) Այս տեղեկութիւններն ինձ հաղորդեց բարձրապատիւ Գարեգին վարդ, Յովսէփիանը, որ ընդարձակ ուսումնասիրութիւններ աւնի միքանի յալոնի տոհմերի մասին:

չէ հաստատւում նրանց տոհմակցութիւնը։ Թէ և
միւս կողմից՝ գժւար է դրականապէս ժխտել այդ
տոհմակցութիւնը։

Ուշադրութեան արժանի է, որ մեր վերջին
ժամանակների քաղաքական գործիչները՝ սիրում
են իրենք իրենց սերւած համարել այս ու այն
յայտնի տոհմից։

Այսպէս, օրինակի համար՝ Յովսէփ կաթողի-
կոսը, որ Սանահնեցի Շիօշ անունով մի հասա-
րակ մարդու զաւակ էր, յաջողեցաւ ոռւս կառա-
վարութիւնից հաստատւել իրքն սերունդ իշխան
Երկայնաբազուկ-Արդութեանների։

Այսպէս Ներսէս Աշտարակեցին, որ համա-
նուն գիւղի Յարութիւն քահանայի որդին էր,
յաջողեցաւ իրեն վերագրել ռսերեալ ի Պայտագատ
ուերնդոց երևելի նախարարութեանց Հայկազանց
Կամսարական կոչելոց։

Այսպէս՝ Ամիրիսաննեանց Յովսէփ անունով
մի Հընդկաստանցի հայ՝ աշխատում էր ոռւս կա-
ռավարութիւնից մի վկայական ոտանալ առ այն,
իրը թէ՝ ինքը հայ առաջնակարգ տոհմերի մէկի-
ցըն է ծագում, թէ իր նախնիքը այս ու այն
ազգաշահ գործերն են կատարել մի ժամանակ։
Եւ այն։

ի՞։

Այսպէս թէ այնպէս՝ Օրիի հին, իշխանական
ծագում ունենալ, որքան որ ոկզբում թերևս օգ-

տակար էր Պֆալցի իշխանի և Պետրոս Մեծի
աշքում, որոշ չափով վստահութիւն ներշնչել
տալու թէ դէպի նրա անձը և թէ դէպի նրա
ձեռնարկութիւնը, այնքան վերջերում հակառակ
արդիւնք առաջ բերեց։ Որովհետև, ինչպէս տե-
սանք, գեռ Օրին Սպահան չհասած՝ նրա անձնա-
ւորութիւնը արդէն կասկածի էր ենթարկել և
նրա ձեռնարկութիւնը ամլութեան էր գատապար-
տւել չիւսէին շահի և նրա աւագանիի աչքում։

Դառնալով բուն ինզրին՝ մենք տեսանք, որ
1678 ին Երովա մեկնող պատգամաւորութեանը
մասնակցող Օրին 19 տարեկան ոի պատանի էր։

Պատգամաւորների կ. Պօլսից յետ գառնա-
լուց յետոյ՝ Օրիի Եւրոպա զնալն հայ վաճառա-
կանների հետ՝ կարելի է վերագրել բաղդ որոնե-
լու և կամ ուսում ոտանալու նրա ցանկութեա-
նը, — ցանկութիւն, որ յատուկ է Օրիի, նման
կենդանի և աշխոյժ պատանիներին։ Նա մանա-
ւանդ որ ուսում առած ունիթունների կենդանի
գործունէութիւնը Օրին իր աշքի առաջն ունէր
իր մանկութեան օրերից սկսեալ։

Բայց Օրիի Եւրոպա գնալը կարելի է վերա-
գրել և այն հանգամանքին, որ մելիք Իսրայելի
որդին՝ հօրիցը և ուրիշներիցը շատ անդամ լու-
լով միուիօնէրների այն կաթոճիքը, որ եթէ լուսա-
ւորչական հայերը կաթոլիկութիւն ընդունեն՝ ոչ
միայն Պարսկաստանի իրենց կաթոլիկ ազգային-
ների նման շահի ինամքը կը վայելեն, այլ նաև
սեպհական հայկական իշխանութիւն կունենան, —

Օրիի սրտում ու զլխում զերջ ի վերջոյ հայրենատարական զգացմունք զարթեցրին և հայրենիքի անկախութեան միաքը թելազրեցին:

Նամանաւանդ որ, ըստ վկայութեան մելիքների, Օրին հայրենասէր Պոօշ իշխանի շառաւիղ գոլովի իր երակներում նոյն արիւնն էր կրում, ինչ որ կրում էին նրա ցեղի 4 հոգի ազգութեան ու հաւատի համար իրենց արիւնը թափող յայտնի ներկայացուցիչները:

Այս ենթագրութիւնը հաստատութիւն է ստանում և այն բանում, որ Օրին Եւրոպա ժամանելիս՝ զինւորական ծառայութեան մէջ է մըտնում և պատերազմների մասնակցելով մինչև կապիտանի աստիճանի է հասնում:

Թերես նա ուզում էր զինւորական արհեստ Եւրոպայում սովորելով ժամանակին զօրավար, կամ նոյնիսկ թագաւոր դառնալ իր հայրենիքում:

Եւ ինչի՞ չդառնար, երբ նա ժառանգ էր այն հօրը՝ իսրայէլին, որ մելիքութեան կոչում ունէր և իր զօրքն ու նպատակները:

Եւ անշուշտ այս վերջին նապատակին հասնելու համար է, որ Օրին մօտենում ու բարեկամանում է Պֆալցի իշխանի հետ։ Եւ նրա միջոցաւ ուզում է մի նոր տեսակ խաչակրաց արշանք առաջացնել Եւրոպայից դէպի Ասիա։

ԻԵ.

Պֆալցի իշխանի տչքում՝ Օրիի առաջարկած

խաչակրաց արշաւանքը՝ Եւրոպական նախորդ արշաւանքից այն առաւելութիւնն ունէր, որ մինչդեռ ու երկրի ազատութեան ծանրութիւնը՝ Եւրոպական բանակները միայնակ պիտի կրէին, Հայաստանի ազատութեան ծանրութեան ամենամեծ մասը, ընդհակառակը, աեղական բրիստոնեայ ժողովրդի վրայ էր ընկնում։ Իսկ Եւրոպացի փոքրաթիւ բանակը՝ միմիայն ձեռներէցի և դեկապարի գեր պիտի խաղար, ինչպէս որ հաւատացնում էր Օրին։

Պֆալցի իշխանին Հայաստանի գրութիւնը զեկուցանելիս՝ Օրին անշուշտ հիմնում էր իր տեսածների և իմացածների վրայ։ Եւ որովհետեւ նա հայրենիքից 20 տարի առաջ էր հեռացել և միմիայն առաջին երկու տարին կարող էր յարաբերութիւն ունենալ իւրայինների հետ, այնուհետեւ մեռած կամ կորած էր համարում, ուստի բնական է, որ իշխանին տւած տեղեկութիւններն կարող էին ճիշտ չլինել, թէպէտ և 20 տարին ինքնըստինքեան մեծ ժամանակ չէ։

Բայց այս դէպում՝ Օրին մեղադրելու առանձին հիմք չկար։

Իսկ երբ Պֆալցի իշխանի յատուկ յանձնաբարութեամբ Օրին հայրենիք է գալիս ճշգրիտ և ստոյգ աեղեկութիւն ժողովելու, — այսուեղ նըրք վարմունքը չէ համապատասխանում իր ստանձնած լուրջ և պատասխանատու զերին։

Տեսանք՝ որ Օրին հայրենիք հասնելով նախ և առաջ էջմիածին մտաւ և նահապետ կաթողի-

կոսին յայտնելով իր նպատակը՝ մերժւեցաւ նրանից:

Կաթողիկոսի այդ մերժումը մեր գրողներից ոմանք վերազբում են նրա ստրկամտութեանը: Իսկ մելիքներն, ինչպէս տեսանք, նրա փառաւ սիրութեանը:

Բայց ես կարծում եմ, որ կաթողիկոսի մերժումը կարող էր լինել հետեւալ երեք պատճառներից մէկի կամ միւսի.

Ուաշինը այն, որ էջմիածնի կաթողիկոսը կարող էր Օրիին լրաւես ոմն համարել, ուստի և առանց նրա մօտ բացւելու, մէկանց նրա առաջարկը կը մերժէր:

Երկրորդ պատճառը այն կարող էր լինել, որ կաթողիկոսի համազմամք՝ չոսմայ պատի իրաւասութեան տակ մտնելն ոչ միայն հաւատութային, այլ նաև ազգուրացութիւն կը լինէր:

Վերջապէս երրորդը այն, որ կաթողիկոսը կարող էր համազւած լինել, որ գերմանացի իշխանը հայերի գեղեցիկ աչքերի համար չէր, որ ուզում էր իր զօրքերով Հայաստանն ազատել:

Անշուշտ նահապետ կաթողիկոսը ազգի անցեալ պատճութեանը և նրա արդի կացութեանն ու վիճակին կարող էր աւելի լաւ ծանօթ լինել քան Օրին: Եւ ուրեմն վերջինիս նպատակը՝ կաթողիկոսի աչքում կարող էր մի սոսկ, զիտակցական կամ անգիտակցական արկածախնդրութիւն—աւանդիւրա թւալ:

Օրիից 150 տարի յետոյ մի այլ հայրենա-

մէր՝ Աղա Շամիր անունով Հնդկաստանի Մադրաս քաղաքից՝ մեղադրում էր էջմիածնի Ղուկաս կաթողիկոսին, որ սա ապատամբութեան դրօշակ չէ պարզել տալիս հայերին, մինչդեռ ոռւս բանակն քրիստոնէից ազատութեան համար արդէն պատէրազմ է յայտարարել զարսիկներին:

Ահա թէ ինչպէս էր արդարացնում կաթողիկոսը իր անձը:

«Միթէ յիմար իցեմք, — կրում էր նու Աղա Շամիրին, — որ ի տառապանաց զերծանիլ չկամիցիմք: Զկունք որսացեալք ի ցանցս, և թուչունք ըմբռնեալք ի վարմս՝ ջանան զերծանիլ. առա որքան ևս առաւել բանականքս բաղձամք ազատութեան: Սակայն զի ալժմոյս կարի դժւարին է առ մեզ և վաճանդաւոր յոյժ, վաճն որոյ երկուց չարեաց զփոքըն ընտրել պիտոյ է:»

«... Եւ հաւատուալէս իմա, — շարունակում է կաթողիկոսը, — որ ոչ ի չիւսիսական տէրութենէն և ոչ յալոց մեզ այցելութիւն կարէ լինել»*: Եթէ Դու կաս կաթողիկոսի ժոմանակ պարսիկները դեռ այնքան զօրեղ էին, որ նրանց գէմ ապստամբելն անհնառութիւն էր համարւում, և այն իրաւացի կերպով, — հապա որքան նրանք զօրեղ կը լինէին 150 տարի առաջ, երբ Օրին հայերին նրանց գէմ ապստամբեցնել էր ուզում:

Ուրեմն նահապետ կաթողիկոսի մերժումը Օրիին ոչ ստրկամտութեան հետեանք էր, ոչ եւ

*) Դիւան Հայոց պատմ. Ա. հատ., եր. 18:

փառատիրութեան:

Օրին հրոսակապետ չէր, ոչ էլ հայզուկների կամ ասովատակների խումբ էր կազմելու, որ այնքան շտապ ու վայրիվերոյ վերաբերւեց իր ծրագրի իրագործմանը, — ծրագիր, որով 200,000-նոց հայ բանակ պէտք էր կազմէէր ձեռաց և պարուկահայաստանի մի ծայրից մինչև միւսը տիրէր:

Հետհաբար՝ Օրին պարտաւոր էր ամեն կերպ աշխատել էջմիածնի կաթողիկոսին իս կողմի ունենալու և նրանով իրբե մի մեծ բարոյական ոյժով գրաւել և Արարատեան աշխարհի հոծ և ստուար հայութիւնը, որ ամենից աւելի ենթակայ լինելով պարսից կեղեքումներին, աւելի կարօտ և ծարաւի էր ապատութեան:

Դժբաղդաբար՝ Օրին արհամարհեց էջմիածնի կաթողիկոսին և շտապեց Ազւանից կաթողիկոսին, — նրա աթոռանիստ Գանձոսարի վաճքում:

Ի՞Չ.

Բայց այսակ էլ Օրին մի այլ աարօրինակ եղանակ մտածեց գանձասարցիներին հրապարելու և մեջտեղում չեղած գումարով նրանց, այսպէս ասած, կաշառելու:

Իսկ երբ տեսաւ որ գանձասարցիք հակամէտ չեն իրենց վաճքն ու կեանքը վտանգի ենթարկելու, — Օրին միսիօների գեր ստանձնեց և սկսեց հայ և կաթողիկ եկեղեցիների միութեան

հարցը բարձրացնել և կաթողիկութեան ջատագով հանգիսանուլ այն փառաբանութեամբ, ինչ որ նրան դառ տւած կը լինէին Հայաստանում գործող ունիթունները և կամ նոյնիսկ Պֆալցի իշխանի խոստովանահայրը պատեր Պօտիան:

Շատ պարզ էր, որ այս ձեռով Օրին երբէք չէր կարող յաջողութիւն ունենալ: Ազւանից կաթողիկոսը ևս պիտի մերժէր Օրիի առաջարկը այն հիմունքներով, որոնցմով էջմիածնի կաթողիկոսն էր մերժել:

Ես գես աւելին կասեմ: Գանձասարցիք կարող էին Օրիին ուղղակի խաբեբայ ոմն համարել՝ համեմատելով նրա առաջին և վերջին առաջարկները:

Ուրեմն Օրին ընդունակութիւն չունեցաւ գոնէ Ազւանից կաթողիկոսութիւնը իրեն աջակից ունենալ՝ յօգուտ իր ծրագրի իրագործման:

Իսկ այս հանգամանքը մի մեծ մինւսս պէտք է համարել նրա նպատակի և գործունեութեան նկատմամբ*):

Ի՞Ն.

Օրիի ծրագրի յաջողութեան միակ գրաւա-

*) Աւշագրութեան արժանի է, որ Օրիի գործելակերպին էր հետեւում մեր 80—90թւականների քաղաքական գործիչ Գրիգոր Արքունին և նրա «գաղափարների ամենամոլեսանդ քարոզիչ» Ռաֆֆին, — մեր այդ խոշոր քաղաքական ազիտատօբը:

Դրանք էլ քարոզում էին, որ Տաճկահայաստանում ապատամբութիւն պէտք է առաջնային՝ առանց հոգեւորականութեան, առանց զրամատէրերի և առանց մըտաւորականների մասնակցութեան:

Ծան, յօդ.

կան մնաց ուրեմն Անգեղակոթի ժողովի որոշումը: Այսաեղ ժողոված 10 մելիքներն առանց այլեալութեան միաձայն որոշեցին:

1) Հայեկեղեցին ենթարկելով պատի իրաւասութեանը՝ միացնել նրան կաթոլիկ եկեղեցու հետ:

2) Իբրև հայեկեղեցու և նրա պաշտօնէութեան ներկայացուցիչ՝ Օրիի հետ Եւրոպա ուղարկել Մինաս վարդտողետ Տիգրանեանին, մի ողորմելի կրօնաւոր, որ մանը կէնի պաշտօն էր կատարելու:

3) Հաւատարմաթուղթ, կամ ինչպէս Օրին էր ասում, կարտբլանչ տալ Օրիին և Մինաս վարդապետին, իբրև աշխարհիկ և հոգեոր հայութեան ներկայացուցիչների, որ երուպական թագաւորների առաջ գործեն յանուն Հայաստանի ազատութեան ըստ իրենց հայեցողութեան:

4) Էջմիածնի և Աղւանից կաթողիկոսների անմասնակցութիւնը Օրիի առաջարկութեանը՝ համարել սոսկ նրանց փառասիրութեան արդիւնք: Եւ

5) Օրիի ծրագրով հայերից ոլորհանջւած ամեն տեսակ սազմական օգնութիւն և նիւթական գոհաբերութիւն երգամբ յանձն տանել:

Այսպիսի լիազօրութիւններով ահա Օրին և Մինաս վարդապետը ճամբայ ընկան Եւրոպա:

Բայց նախապէս մելիքները ի պատիւ նրանց մի ճաշկերոյթ սարքեցին:

Սեղանատան պատից կախւած էին Աւոտրիոյ Լէօպոլդ կալսեր և կայսրուհու, նոյնպէս և Պֆալ-

ցի իշխանի և իշխանուհու պատկերները, — (որոնք Օրին Եւրոպայից հետ բերել էր), — իրենց առաջ շարւած վառ մեղրամոմերով:

Ամեն ճառ խօսել ցանկացող սեղանակից՝ նոտի քան բերան բանալն՝ ոտի էր կանգնում, ակնածութեամբ պատկերներին զլուխ տալիս և ապա սկսում իր ճառը:

Ճաշից յետոյ՝ ժողովի որոշմամբ՝ Անգեղակոթի քահանան պատկերները տարաւ և եկեղեցում կախ տւեց:

Որքան որ ազատութեան կարօտ Օրիի և մելիքների նկատմամբ՝ այսպիսի ցոյցերն ու ոգեւորութիւնները ներելի են, բայց զրանք, միենոյն ժամանակ, տկնյայտնի ապացոյց են նրանց թեթեամտութեանն և քաղաքական ահասութեանը, որ այս գէպքում բացի վնասից՝ ոչ մի բարիք չէին խօսատանում իրենց նպատակին:

Բայց այս կէտում չպէտք է մենք այնքան էլ խստապահանջ լինենք լիոնցի մելիքների նըկատմամբ, երբ այդ պակասութիւնը մեր մէջ ընդհանուր է, զուտ հայկական կարելի է ասել: Հազարա որ թէ հին և թէ նոր գէպքերից վերցնենք թեկուզ հետեւելլ:

Երբ 1828 թւականում ուսուց բանակը Արզրում մտաւ՝ տեղական հայերը Պատկերի առաջըրկաւթեամբ 500 հոգուց բաղկացած մի խումբ զինւոր զրին նրա տրամադրութեան տակ բաղադրում կարգկանոնը պահելու համար: Ինձ յայտնի չէ, թէ այդ հայ քաղաքապահներն որ-

քան ճշտութեամբ կարողացան իրենց պարոքը կտառվել — բայց ինձ յայտնի է, որ այդ օրեւ բում հայերի անձարձակութիւնն ու լրբութիւնը մինչև այն կէտին հասաւ, որ մինչև իսկ Արքումի մզկիթներից միքանիսի գրսի պատերը մարդկային կղկղանքով էին ծեփում գիշերները:

Դարձեալ նոյն քաղաքի իմաստուն խիկարժները, որոնք միշտ հրատիրում էին ուսուց զինւորական հանդիսաւոր ճաշկերոյթներին, այն պատրիճան ոգեորեւում էին Պատկերչի և նահանգապետ Բանգրատեկ գեներալի սիրալի վերաբերմունքից սեղանի վրայ, որ կարծում էին թէ այդ բարու ուսու աստիճանաւորները միանդաման երկու ուսու աստիճանաւորները մտերմացած են իրենց հետ: Ուստի և երեսն մերմացած էին իրենց համար մասնակիութեամբ այդ իմաստուն խիկարժները և զանազան չնչին բաների համար մասնաւոր նամակներ էին գրում և իրենց ծառաների ուր նամակների մեջ գրում և գրեցներով իրենց ձեռքով ուղարկում հետեւալ հասցէներով իրենց նամակների վրայ «առ մեծ եներալ սիրացու^(*) գասկերից»: Եւ կամ «առ եներալ մահեսի բազրատով», հասցե ուրախ ժամու»^(**)):

Արզըումի խիկար իմաստուններից աւելի տղայամիւ և թեթեամիս գտնուեցան այն մի

^(*) Տիրացու բառը հայոց մէջ հնումը տմինապատշաճուր տիտղոս էր: Տիրացու բառի արմատը ավագ է — գրագիտութեան աստուածը:

^(**) Բանգրատեին հայ կարծելով՝ անուանում էին Բազրատով և իրեն պատւար տիտղոս՝ աւելացնում էին մահապետի բառը:

խումբ հայ յեղափոխականները, որոնք 1895 թւին սումբերով և զինամիաներով Օսմաննեան բանկի վրայ յարձակուեցան կ. Պօլսում: Եւ վոխանակ այդ միջազգային մեծ գրամատունը յօդս ցնդեցնելու և այսպիսով եւրոպացի գրամատէրերի միջամտութիւնը առաջ բերելու, և ինչպէս որ մտագրուած էին, ընդհակառակը մի տէրութեան ներկայացւցչի թարգմանի խորհրդին անուալով բանկից գուրս եկան ծալած ձեռքերով և բանկի գոնից մինչև ծովափը շարւած թիւրք զինւորների պաշտպանութեան տակ՝ շոգենաւ նոտելով Զվիցերիա գնացին: Եւ արագիսով զբանք, մեր այդ աղայամիս յեղափոխականները՝ 1895—1896 թւականի անեղ կոտորածների առաջին սիգնալը իրենք տին:

Եւ զբանով մի անգամ ևս ապացուցին, որ իրենց համար ուելօլիսօն և զրովակասիօն բաներն հօմանիչ և նոյնիմաստ են:

Ի՞ւ.

Գտանանք Օրիի ծրագրին:

Ահա նրա համառօտ բովանդակութիւնը:

1) Պֆալցի իշխանը 5-ից մինչև 6 հազարնոց մի բանակ կուղարկէ կամ իրենից և կամ իր գանձակիցներիցը:

2) Ուունիետի բանակը շէ կարող կարճ ճանապարհով — Տաճկառտանի միջով անցնել, այլ Աւստրիայի, Լեհաստանի և Ռուսաստանի մի-

Հովիր ուստի պէտք է ձիա որ լինի:

3) Բանակի պաշարը բոլոր ժամանակ Ուստաստանի հոյ վաճառականութիւնն է հոգալու:

4) Հէնց որ բանակը վօլգայի վրայով և կասպից ծովով ցամաք դուրս կը դայ, նա 1701 թ. գարնանը կը զրաւէ Բագուն և Շամախին, որ Օրիի կարծիքով՝ Հայաստանի սահմանագույնն է կազմում: Այստեղ եւրոպական բանակը կազմ և պատրաստ կը դանի 10,000 հայ ձիաւոր զօրք: Կարճ միջոցում Շամախի կը ժամանէն Հայաստանի ալլեայլ կողմէրից հաւաքւած 110,000 հոգի, Տաճկաստանից էլ կը համնեն 80,000 հոգի.

Այսպիսով՝ կը կազմուի 200,000 հոգուց բաղկացած մի հայկական մեծ բանակ, Դրա վըրայ կաւելանայ վրաստանից հայերին օգնութիւն եկող միքանի տասնետկ հազար վրացի կտրիճների բանակը:

Եւ որովհետեւ, Օրիի կարծիքով, Պարսկաստանը 38,000-ից աւելի զինուոր չէ կարող հանել պատերազմի դաշտը, — ուստի նրա նուածումը ոչ այլ ինչ է լինելու, եթէ ոչ սոսկ պատերազմական զրուանը հայ բանակի համար:

5) Այսպիսով առանց որիէ արդելքի համեղիպելու հայկական բանակը չորս ուղղութեամբ այն է՝ Գանձակի, Լոռիի, Ղափանի և Նախիջեաւանի վրայով, առաջ կերթայ աիրելով Շամաւարուց մինչև Արտքս տարածուած պատրաստական երկիրը:

Այսուհետեւ Նախիջևանում բոլոր զօրաբաժինները միանում են և Արաքսի բոլոր անցքերը բոնելով՝ Երկանի վրայ են արշաւում և առանց դժուարութեան տիրում այդ բերդաքաղաքին ևս:

6) Այսպիսով ամբողջ Պարսկաստանին տէր դառնալուց յետոյ՝ Օրին մտադիր էր նաև Արաքսն էլ անցնել և հասնել մինչև Թաւրիդ և դեռ աւելի հեռու գնալ: Սակայն պէտք է ասած, որ այս վերջին մտադրութիւնը Օրին պահում էր ապագայի համար:

7) Պարսկահայաստանին տիրելուց յետոյ՝ Օրին այնտեղ կազմակերպելու էր հայկական իշխանութիւն ՊՓալցի իշխանի կառավարութեան ներքոյ:

8) Պարսկաստանի սահմանակից Տաճկաստանից Օրին երկիւղ չունէր, որովհետեւ հայկական բանակը Տաճկաստանին չպիտի ձեւ, ոը տար:

Իսկ եթէ Տաճկաստանը սկզբունքով հակառակ լինելով իր սահմանագլխում հայկական անկախ իշխանութեան կազմելուն՝ տեղիցը շարժւէր, — այդ դէպքում Ոտուսաստանն ու Աստրիան ձեռաց նրա վրայ կը յարձակէին՝ իրենց հին հաշիւները նրա հետ վերջացնելու համար:

Ահա այս էր Օրիի ծրագիրը:

Աւելացնենք, որ այս ծրագրի իրագործումը՝ ոչ թէ մերձաւոր կամ հեռաւոր ապագայուն երկիրը:

մըն էր լինելու, այլ հէնց այժմ, առաջ ժամա-
վաճառ լինելու:

իթ.

Կարսղ էր արգեօք այս ծրագրը իրա-
գործւել:

— Ի հարկէ ոչ: Եւ ահա թէ ինչ պատ-
ճառաւ:

Նախ և առաջ այն պատճառաւ, որովհետեւ
հայրենիքի ազատութեան գաղափարը ներսից,
հայ ժողովրդից չէր բղխում, այլ դրսից՝ կո-
թոլիկ միսիոնէրութիւնից:

Հայաստանի ունիթուները, — եթէ կարելի
է այսպէս տոել, — մի տեսակ տոետրի էին ձեռ-
նարկել հայերի հետ: Նրանք ուզում էին Հա-
յոց եկեղեցու անկախութիւնը զնել՝ փոխարէնը
քաղաքական տնկախութիւն խոստանալով:

Իրենց զնելիք ապրանքը՝ կանխիկ էր, իսկ
տալիքը՝ ապառիկ:

Ենթագրելով անգամ, որ ունիթուները ի-
րենց խոստանը չէին գրժիլ, այլ անկեղծօրէն
կուզէին, հայերին անկախութիւն տալ, Բայց
բանը նրանումն է, որ անկախութիւն տւողը
ոչ ունիթուներն էին, ոչ էլ Հռոմի պատրը, այլ
եւրոպական այս կամ այն պետութիւնը, կամ
պետութիւնները, որոնք — այս պէտք է չմոռա-
նալ: Իրենց քաղաքական գործառնութեանց ու
ձեռնարկութեանց մէջ սական երբէք կրօնա-

կան հաշիւներով չեն զեկավարւում: Նրանց
համար կրօնը, եկեղեցին նպատակ չէ, այլ մի-
ջոց այս քաղաքական նպատակին զի-
մելու և հասնելու համար:

Մուբինեան վերջին թագաւորների օրե-
րով կաթոլիկութիւնը մեծ քայլերով հայ եկե-
ղեցու մէջ մտաւ: Մի քանի անգամ կաթոլի-
կութիւնը պաշտօնապէս, ազգային ժողովներով,
ընդունուեցաւ կիլիկոյ հայերի կողմից, թէ կա-
թոլիկուների և թէ ժողովրդի մի մտսի կող-
մից, — այսուամենայնիւ Եւրոպիոյ կաթոլիկ պե-
տութիւնները ոչ միայն չկարողացան, այլ նոյն
իսկ չկամմեցան կիլիկոյ հայկական իշխանութեան
կործանման առաջն ուռնել: Եթէ ընդունենք ան-
գամ, որ կործանման պատճառը հէնց իրենք
չեղան:

Այս ամենը քաջ յայտնի էին Օրիի ժամա-
նակակից հոգեորականութեանը՝ յանձին կջմիա-
ծնի Նահապետ և Ազւանից Սիմէօն կաթոլի-
կուների: Եւ զրա համար էլ նրանք հրաժար-
ւեցան Օրիի առաջարկութեանը համակերպելուց:

Քիչ յետոյ մենք կը տեսնենք, որ հայ վա-
ճառականութիւնը ևս Օրիի հետ համակարծիք
չէր: Գալով հասարակ ժողովրդին, — նա ոչ մի-
այն ժէ գարում, այլ նոյնիսկ մեր գարում, ոչ
մի վճառական ձայն չունի համանման գէպքե-
րում: Եւ կամայ թէ ակամայ խեղճը գործիք է
զառնում իրական գործիչների ձեռքում:

Այս զիտենալով էր անշուշտ, որ 10 մելիք-
ներն ինքնազլուխ որոշում են իրենց ժողովրդի
հետ՝ Հոռմի իրաւասութեան տակ մանել:

Թէպէտ և ես շատ եմ կասկածում, որ նը-
րանք կարողանային այդ դէպքում ժողովրդին
քարշ տալ իրենց ետեից:

Այսպէս թէ այսպէս, բայ ո. Գրոց, եթէ
տուն շինողը տէրը չէ շինողները նաևիր—ի-
զուր են վաստակում,—այսպէս էլ եթէ մի ազգ
իր անկախութի նը ու ըիշնիրի ձեռքով պիտի
ձեռք բերի, այլ ոչ իր սեփական ձեռքերով,—
վայ այդպիսի անկախութեան: Եւ եզնել նրանց,
որոնք այդ ճանապարհով են ուզում անկախու-
թիւն ձեռք բերել:

I.

~~+~~ Օրիի ծրագիրը՝ երկրորդաբար՝ չէր կարող
իրագործուել այն պատճառաւ ևս, որովհետեւ Աւ-
ստրիայ և Ռուսիոյ կայութերը և Պֆալցի իշխա-
նը, — եթէ կուրելի է այսպէս տոել, — խաղա-
թղթեր չէին, որ Օրին նրանցից իրեն ուզած
անակները շինէր:

~~+~~ Հին զարերից ի վեր մինչեւ ներկաւ դարը
(և անշուշտ գեռ երկար դարեր) քաղաքակա-
նութեան բառարանում զոյտթիւն չին ունեցել
և չունին՝ խզմտանք, մարդասիրութիւն, ար-
դարութիւն և այլ այսպիսի սանտիմենտալ
բառեր:

Քաղաքականութեան մզիչ ոյժը, նրա մի-
ակ նպատակը՝ բացառապէս նիւթական շահն է,
որ առաջ է մզում զանազան պատրւակեալ
անուններով և ձեերով:

Բիսմարքի յայտնի խօսքերը թէ՝ «Պօմե-
րանցի մէկ զինուորի ոսկորներն աւելի արժեն,
քան ամբողջ հայութիւնը»՝ կոպիտ ձեռվ ար-
տայայտւած մի ընդհանուր ճշմարտութիւն է
քաղաքագէտների համար:

Սրդ՝ Օրին ի՞նչ շահ էր խոստանում Պֆալ-
ցի իշխանին երբ նրանցից պահանջում էր իր
բանակը Հայաստան ուղարկել հայերին ազատե-
լու համար:

Հայաստանի թաղը:

Ենթագրենք: Բայց կարող էր արդեօք
գերմանացի իշխանը երկար պահել իր զիսի
վրայ այդ թաղը՝ Պարսկաստանի, Ցածկաստա-
նի և Թուսաստանի մէջ ընկած մի տարածու-
թիւնում:

Նապօլէօնն էլ խեղճ Մակսիմիլիանոսին Ա-
մերիկայի վրայ թագաւոր կարգեց: Բայց Մաք-
սիմիլիանոսը քանի՞ օր կըց այդ թաղը:

Վիդ իշխանը այսօր Ալբանիայի թագաւոր
է կարգւում: Կարող է պատահել, որ նա էլ եր-
կար չթագաւորէ: Մական անշուշտ նրան փո-
խարինող նոր-նոր վիդեր կը զանէ Եւրոպան,
քանի որ նրա շահը պահանջում է, որ Ալբան-
իան անշուշտ անկախ իշխանութիւն լինի:

Այսպիսի շահս չունէր Պֆալցի իշխանը,

տւատի և իր փառասիրական ցանկութիւնը զլսապելով յետ կանգնեց Օրիին տւած խոստումից:

Վերջին քայլից իշխանին յետ կանգնեցնել տալու չյաջողեցաւ նոյնիսկ՝ նրա խոստովանահայրը, որի եկեղեցու շահերը պահանջում էին, որ իշխանը իրագործէ Օրիի ցանկութիւնը:

Աւստրիոյ կայսրից և Պֆալցի իշխանից յոյսը կարած՝ Օրին գիմեց ուսւաց կայսեր և կարծում էր; որ Պետրոս Մեծը պակաս խելօք է, քան առաջինները: Եւ թէ իր շողոքորթութիւններով և չափազանցութիւններով կարող է նրան իր նպատակին ծառայեցնել: Սակայն փորձը ցոյց տւեց, որ ընդհակառակը՝ Օրին ինքը Պետրոս Մեծի նպատակին ծառայեց և նրա ձեռքին մի կատարեալ գործիք դարձաւ, մոռանալով կամ զանցառութեան տալով իր սկզբնական վեհ նպատակը:

Արդ՝ տեսնելով Օրիի այս աստիճան միամտութիւնը, այսքան անտեղեակութիւնը գէթիր ժամանակի քաղաքականութիւնից և վեհապեանների հայեացքներից ու փոխադարձ յարաբերութիւնից, ևս ալևս հրաժարում եմ ըմբռնելու նրա՝ Օրիի՝ քոյարին Գօլօվինին ուղղած մի նամակի հետեւալ բառերն՝ «Մրանից 22 տարի առաջ Եւրոպա գալով և Ֆրանսիայում, Գերմանիայում ու Բիւզանդիոնում ապրելով ես տեսայ, ծանօթաց եւ վարժեցացինուրական եւ դիւնագիտական արեւալերին»:

Հստ երեսյթին պէտք էր որ ալդպէս էլլինէր: 22 տարի Եւրոպայում ապրող, Եւրոպայի բանակների և իշխանազունների շրջանում գործող, Եւրոպայի գրեթէ բոլոր լեզուներն իւմացող մի մարդ, այն, պէտք է որ գոնէ փոքրի շատէ ունենար այն յատկութիւնը, ինչ որ Օրին վատահաբար գրում էր Գօլօվինին թէ ունի:

Ի վերայ այսը ամենայնի՝ ես այս կէտում ես՝ արամագիր չեմ Ժէ՛րդ գարի մեր հայրենասէրին մեղաղբելու, քանի որ նրանից յետու եկող մեր միւս հայրենասէրները ես միենոյն, և առաւել մեծ քաղաքագիտական, սըխաններ են գործել: Երբ սրանք ես աւելի իւրենց ազգասիրական թոփչքներով են զեկալարւել և ընթացել, քան իրական կեանքով:

ԱԱ.

Դաւնանք այն հարցին, թէ միթէ չէր կարող իրագործել Օրիի ծրագրի գէթ այն մասը, որ վերաբերում էր հայ ազգաբնակութեան կողմից՝ Եւրոպայից գալիք բանակին ցոյց տըրւելիք սակմական և զրամական աջակցութիւնը:

— Այն, ծրագրի այդ մասն ևս գժբախտաբար չէր կարող իրագործել: Եւ այս հաստատում է շատ հասարակ կերպով:

Թէպէտ Օրիի ժամանակ Եւրոպական բանակի Հայաստան գալն՝ թէկ միայն թղթի վրայ

մաց, բայց մի քանի տարի յետոյ, այս է 1722 թւին, երբ ռուսական բանակը դէպի արևելք արշաւեց և Պետրոս Մեծի կողմից հայերին կոչ եղաւ՝ տեղիներիցը շարժուել, հայ կտրիճներով իրեն զիմաւորել, ահա այդ ժամանակ երևեցաւ, որ Անգեղակովում Օրին մեծ-մեծ խոստումներ անող, — թող ներսի առեւ — խելքից հանող հայ մելիքութիւնը հազիւ հազ կարողացաւ 10,000 ռազմիկ հայ հաւաքել:

Եւ չառանանք, որ այդքանն և եթ հաւաքելու և անձամբ անձին դէպի Շամախի առաջնորդելում գլխաւոր զործողը հայ հոգեւորականութիւնն եղաւ՝ յանձին Ազւանից Եսալի կաթողիկոսի, որ այս անդամ քաղաքական շարժման պարագութիւն հանգիսացաւ, որովհետեւ մէջտեղում եկեղեցու միութեան հարց չկար:

Այս անդամ, ընդհակառակը, Պետրոս Մեծի կողմից մելիքներին ուղած թղթում առանձնապէս շեշտած էր, որ ռուսաց կայսրը հայերի կրօնի ազատութեանը շատագով և պաշտան է հանդիսանալու:

Հետեաբար՝ կաթողիկոսը այս անդամ շարժման ձեռներեցութիւն ընդունեց, որովհետեւ խնդիրը վերաբերում էր հայկական քաղաքական անկախութեան՝ հանգերձ հայկական անկախ եկեղեցիով:

Իսկ այդ եկեղեցին ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նոյն ինքն ազգը զարձեաւ որ իր այդ եկեղեցու անկախութեան համար դարաւոր ժամա-

նակով կոիւ էր մզել Բի զանդիոնի դէմ, Հռոմի դէմ:

Եւ թերեւ նորից հարկ կը լինէր մզելու:

Այս այսպէս լինելով՝ Անգեղակոթի հապաձէպ որոշումը՝ հայ եկեղեցու միացումը հառմէականի հետ՝ ոչ միայն Օրիի և մելիքների աղիտութիւնն է ցոյց տալիս ազգալին եկեղեցու պատմութեան և նշանակութեան վերաբերութեամբ, այլ նաև այն է ցոյց տալիս, որ Ժէրդ գալու մեր քաղաքական գործիչները՝ հարազատ հայրենին են մեր ժամանակակից հայ գործիչների, որոնք երկնքում կունիները որոշուց յանկութեամբ՝ իրենց կաքաները ձեռքներից փախցնում են:

Գալով՝ հայկական բանակին հայ վաճառականութեան կողմից մատակարարելի դրամական օգնութեանը, ես կասեմ, որ այդ ես շատ կասկածելի էր, եթէ չասեմ անկարելի էր:

Օրիի ժամանակակից հայ կրօնոսներն, — ինչպէս պատմութիւնը ցոյց է տալիս, — ընաւ համայնշ չէին նրա ծրագրին: Հայ վաճառականութիւնը պարսից կառավարութիւնից շատ զոհ էր: Եւ նա ինքն էր հրաւիրել Շահաբասին, որ գայ և ազատէ իրենց տաճկական լծից: Եւ իր դասակարգային շահի տեսակէտից հայ վաճառականութիւնը չէր սխալւել: Պարսից կառավարութեան ձեռքի տակ նա միշտ տպահով և միշտ յաջողակ է հղել: Աստի և ոչ մի տրամադրութիւն չէր կարող ցոյց տալ ասլստամ-

բելու կամ այդ նպատակի համար իր քսակի
բերանը բաց անելու:

լԲ.

Մի այլ հանգամանք:

Անգեղակովի ժողովականները իրենց աղեր-
սազրերում շատ խղճակի են նկարագրում ի-
րենց զրութիւնը: Եւ խոստանում են ամեն տե-
սակ օգնութիւն հասցնել զերմանական բա-
նակին, երբ նա Հայաստան ժամանէ:

Միենոյն ժամանակ Օրին հաւաացնում էր
իշխանին, որ Հայաստանում ամեն բան կայ—
և պաշար, և հարստութիւն, և մեծաքանակ
զօրք, և ժողովրդական ոգեսրութիւն, և մեծ
պատրաստակամութիւն:

Չէ որ այս իրերանակառակ տեղեկութիւն-
ներից յետոյ՝ Պֆալցի իշխանը կարող էր տսել՝
կամ հայերի զրութիւնը այնքան վատ չէ, ինչ-
պէս մելիքներն են զրում, և կամ Օրին հաւա-
տիացումները կասկածելի, անհաւատալի են:

Ել չեմ յիշում այն հանգամանքը, որ Պլ-
ֆալցի իշխանը և Լէօպոլդ կայսրը՝ Պարսկաս-
տանում ունեցած իրենց քաղաքական, զինու-
րական և հոգեսրական ագենտների միջոցաւ
տեկի ճիշտ և աւելի ընդարձակ տեղեկութիւն-
ներ կարող էին ունենալ պարսկների և հայե-
րի մասին, քան ինչ որ մելիքներն էին զրում
և ինչ որ Օրին էր զեկուցանում:

Ինձ թւում է, որ այս ամենը ինկատի
տանելուցն էր, որ Պֆալցի իշխանը և Աւստրիոյ
կայսրը քաղաքավարի կերպով յետ կանգնեցան
Օրին տւած իրենց խօսքից և նրան մատնա-
նիշ եղան մուսիոյ կայսեր վրայ:

Վերջինիս ուղղած նրանց հէնց յանձնաբա-
րական նամակները իմ այս ենթագրութիւնն են
հաստատում իրենց բովանդակութեամբ:

լԳ.

Կարծես Օրին նախատեսում կամ զգում
էր, որ ինքը թերեւ մուսիոյ միջնորդութեանը
գիմելու հարկին մէջ պիտի զանուի ժամանա-
կին: Ուստի հեռատեսութեամբ օր առաջ Ան-
գեղակովում մելիքներից մի աղերսազիր ևս
կորպեց, ինչպէս տեսանք, յանուն Պետրոս
Մեծի:

Եւ երբ որ եւրոպացիներից յուստիաբ ե-
ղու՝ այնուհետեւ մելիքների տղերսազրով ներ-
կայացաւ ուսւաց կայսրին:

Եւ այս սնգամ իր ծրագիրը, ի հաճոյս
ուսւաց քաղաքականութեան, ահա թէ ինչպէս
խմբագրեց Օրին:

1) Բացի Լէօպոլդ կայսրից և իօհան Վիլ-
հէլմ իշխանից՝ հայերն ոչ ոքին զիմած չեն
Եւրոպայում: Կայսրն ու իշխանն էլ խոստացել
են հայերին օգնել այն չափով ու եղանակով,
ինչ որ ուսւաց կայսրին հաճելի կը լինի:

2) Պֆալցի իշխանը իր կողմից զօրք չպիտի ուղարկէ Հայաստան։ Այլ այնտեղ մտնող զօրաբանակը բացառապէս ուղևականն է լինելու։ Իշխանի օգնութիւնը հայերին միմիայն այն է լինելու, որ նա Եւրոպայի վեհապետների հաճութեամբ՝ չպիտի թոյլ տայ տաճիկներին որեւ խլրախւն անել հայոց դէմ, երբ ուղևական բանակը Հայաստան մտնի։

3) Զօրաբանակը Հայաստան մտնելու է յանուն Ռուսիոյ կայսեր։

4) Երբ բանակը զըաւէ Հայաստանին՝ վերա ջինս մնալու է ուղևաց կայսեր անտան և իշխանութեան և նրա զինւորների պահպանութեան տակ՝ մինչև արշաւանքի վերջանան։

5) Այսուհետեւ ուղևաց զօրքերը մնալու են դարձեալ հայոց բազաւորութեան մէջ և բոլոր ժամանակը հայերի հաշով են ապրելու։

6) Որովհետեւ Հայաստանը հարուստ է, ուստի ուղև զօրքի կերակրելը ոչ մի դժւարութեան չի հանդիպի։ Հայաստանի մեն մի գաւառը կարող է 100,000 զօրք կերակրել։

7) Բացի հարստութիւնից՝ Հայաստանը բազմաբդ է նաև։ Եւ 10 օրում կարող է 100,000-ից աւելի զինւած բանակ դնել կայսեր տրամադրութեան ներքոյ, որը իր կողմից միմիայն 15 կամ 20 հազարանոց մի բանակ է միայն ուղարկելու Հայաստան։

8) Գալով այն հարցին, թէ ինչու հայերը նախապէս Եւրոպային են զիմել՝ այլ ոչ Ռու-

սիային՝ Օրին պատասխանում է, որ դա եղել է բացառապէս պարսիկների երկիւղից, որոնք Ռուսիային հարեան լինելով՝ հեշտութեամբ կարող էին հայերի մտադրութեանն ու գործունէութեանը իրազէկ լինել։ Այժմ ևս Օրին խընդում, անդաշում է իրեն հարցուփորձ անողներին, որ իր խօսածները խիստ թագուն մնայ պարսիկներից*):

Դ.

Ռուսիոյ կայսեր և Պֆալցի իշխանին ներկայացրած Օրիի ծրագիրների տարբերութիւնը շատ ակնյայտնի է։ Ռուսի և չարժէ նրանց վըրայ կանգ առնել։

Այսքանս պէաք է շեշտել, որ Պետրոս Մեծը՝ եթէ Աւստրիոյ կայսրից և Պֆալցի իշխանից ամեն բանով բարձր չէր, — յամենայն դէպէս ցածը ել չէր։ Հետեաբար Օրիի նման քաղաքագէտներից կարող չէր խարւել կամ մուլուել։

Դրա համար էր, որ ուղև արքունիքը Օրին օրական թոշակ սահմանելով և նրան յատառել կացարան և երկու զինւոր պահակ կարգելով երկար ժամանակ նրան Ռուսաստանում պահեց, մինչև որ Միքոն Վասիլի հայազգի պաշտօնեան

*.) Օրիի պատմութիւնն անելիս՝ մենք տեսանք, որ Միք.Վասիլ անունով պարսիկ աւագանին՝ արդէն մանրամասն տեղեկութիւն ունիր Օրիի այս խօսածների մտարին՝ նախ քան նրա Մպահան համելը,

Հայաստան գնաց և վերադարձաւ; Եւ մինչեւ որ
Պարսկաստանի ոռւս հիւպատոսներից և քաղա-
քական գործակալներից պահանջւած տեղեկու-
թիւնները ստացւեցան:

Եւ այդ տեղեկութիւնների վրայ հիմնե-
լով ոռւս արքունիքը ոս Օրիի ծրագրի մասին
այն եզրակացութեանը յանդաւ, ինչ եզրակա-
ցութեան որ յանդել էին Աւստրիոյ կայսրը և
Պֆալցի իշխանը:

Աւստրի և այժմս էլ ոռւսաց կայսրը Օրիին
խորհուրդ տւեց Աւստրիոյ կայսեր և Պֆալցի
իշխանի օգնութեանը դիմելու: Եւ կամ, ինչպէս
սովորաբար ասում ենք, հիմա էլ ոռւսաց կայ-
սրը սադ արաւ իր գլխից Օրիին:

Իր կրած անյաջողութիւններից շւարած
ու շշմւած Օրին նորից դիմեց Լէօպոլդին և Իօ-
հան Վիլհելմին: Սակայն նորից մերժում ստա-
ցաւ:

Բայց ոչ այնքան հայ հայրենասէրի սիրաը
չկոտրելու, որքան նրա միջոցաւ Պարսկաստա-
նում ունեցած իրենց քաղաքականութեանը այս
կամ այն օգուարը ընձեռելու նպատակաւ՝ Աւ-
ստրիոյ կայսրը և Պֆալցի իշխանը հասկացան Օրիի
մտադրւած դեսպանութեանը ի Պարսկաստան, —
միայն խորհուրդ տւին, որ Օրին իր դեսպանու-
թիւնը կատարէ ոչ թէ վաճառականական, այլ
զինւորական գիպլոմատիքական նպատակաւ:

Այսինքն՝ Աւստրիոյ կայսրն ու Պֆալցի իշ-
խանը կամեցան Պետրոս Մեծի և Օրիի ձեռ-

քով մի փոքրիկ կրակ, հրդեհ առաջացնել Պար-
կաստանում, որպէսզի յետոյ իրենց համար շա-
գանակներ հանեն այնաեղից:

Բայց ես շեշտեցի, այժմ նորից շեշտում
եմ, որ Պետրոս Մեծին խաբելը կամ մոլորեցը-
նելը Լէօպոլդի և Իօհան Վիլհելմի իւելքի բա-
նը չէր:

Այս էր ահա պատճառը, որ Օրիի դեսպա-
նութեանը միջազգային գեսպանութեան կերպա-
րանք տւեց ոռւս արքունիքը, այլ ոչ ոռւսա-
կան: Թէպէտ և այդ գեսպանութիւնը բացառա-
պէս ոռւսական շահերին էր ծառայելու: Այսին-
քըն Օրիի դեսպանութիւնից եթէ օգուտ եղաւ,
օգտառզը ոռւս քաղաքականութիւնն էր լինելու,
իսկ եթէ վեստ կամ անպատճութիւն առաջ ե-
կաւ, — վեստոզը կամ անպատճոզը լինելու էին
նախ և տռաջ հոռմի պապը, Աւստրիոյ կայսրը
և Պֆալցի իշխանը և ապա թէ ոռւս կառավա-
րութիւնը:

լե.

Միտքս պարզեց:

Յալտնի է, որ Ռուսաստանի հանձարեղ
վերանորոգչի ծրագիրներից մէկն էլ այն էր,
որ Կասպից ծովին տիրելով՝ ջրալին ճանապարհ
բաց անէ գէպի Հնդկաստան:

Այս նպատակի իրագործման համար՝ Պետ-
րոս Մեծի աշքում Պարոկտոստանի հայերն ամե-

նից ընդունակ և ամենից յարմար տարրն էին ներկայացնում իրենց վաճառականական և միւս այս ու այն ձգտութմերով:

Սրա համար էլ 1667 թւին Ալեքսէյ Միշայիլովիչի ժամանակ՝ Ռուսաստանի մէջ մի առևտրական ընկերութիւն կազմեցաւ՝ Պարսկաստանից ապրանք և յատկապէս մետաքս Ռուսաստան փոխադրելու համար:

Այդ ընկերութեան շունչ ու կենդանութիւն առողջ Զուզայի հայ վաճառականութիւնն եղաւ, որին շատ փայփայում ու սիրաշահում էր ուսու քաղաքականութիւնը:

Արդ՝ Օրիի Ռուսաստան եկած միջոցին՝ շվեդական պատերազմը արդէն իր վախճանին էր մօտենում, որից յետոյ ուսուական երկզիւանի արծիւը իր աչքերը գէպի արհելը էր դարձնելու և իր բանակները Պարսկաստանի վրայ շարժելու:

Եւ ահա հայ հայրենասօիրութիւնը յանձին Օրիի յօժարակամ, ինքնաբարերար և իր սեփական միջոցներով գալիս է ուսուական այդ ըանակների համար ճանապարհ բաց անելու, զինուրական մի թեթև հետազօտութիւն, մի քորոշութեան կատարելու:

Ինչու չօգտւել այդ պատեհ առիթից: Ինչի թոյլ չառլ, որ հայկական իշխանական ծագում ունեցող, եւրոպական կայսրների և իշխանների հետ յարաբերութեան մէջ գտնող, եւրոպական լեզուներին ափրապեսաղ մի յույտ-

նի իշխանազուն, այսինքն Օրին մի զետպանութիւն կազմակերպէ, երբ որ այդ զետպանութիւնը միջազգային գոյն ու կերպարանք ունի՝ կազմւած լինելով Եւրոպայի բոլոր ազգերի ներկալացուցիչներից, իրենց ազգային տարագներով ու համազգեսաներով. Ինչու Օրիից ինալելոկ անեւանական գնդապետութիւնը*), երբ նա արդէն Եւրոպական զինւորական կապիտանի աստիճանն ունի:

Ինչու Ռուսիոյ կողմից ևս՝ մի քանի թեթև թնդանոթներ չտալ Օրին, երբ նա Եւրոպայից հետը 22,000 ոռորու զէնք է վերցրել:

Վերջապէս Ինչու ոռուսաց կայսրի կողմից ևս յանուն պարսից շահին մի նամակ չտալ Օրիի ձեռքը, որ իր բովանդակութեամբ յար և նման լինի այն նամակներին, որպիսիք նրան յանձնել են Հռոմի պապը, Աւստրիոյ կայսրը և Պֆալցի իշխանը:

Այս ձեռվ ու կազմով Պարսկաստան գնացող զետպանութիւնը, ինչպէս ասացի, չէր կարող ուսուական զետպանութիւն նկատել: Օրին յանձնած թղթերում և նահանգապետաների պաշտօնական գրադրութիւններում Օրին յորջորջում էր Հռոմի պապի և Պֆալցի իշխանի զետպան: Ուստի և Շահի աչքում Օրին երկեցաւ

*.) Երբ Օրիի ինքնիրը Ներկայացրին Պետրոս Միծին՝ նա վրան մակապրեց՝ «Написать, по его желанию, полковникъ».

իսկապէս ոչ թէ գեսպան, այլ սոսկ համակառքը, որ Եւրոպայի վեհապետների համակները վայելուչ շուրջով ու հանդիսաւորութեամբ տեղ էր հասցնում:

լ.զ.

Արդ՝ եթէ այս արտաքուստ, այսպէս ասած՝ բովանդակալից, իսկ ներքուստ անբովանդակ, արտաքուստ իրեւ միջազգային իսկ նիրքուստ փամփշտային, եթերային,—եթէ ասում եմ ես, Օրիի այս գեսպանութիւնը չէր կարող մի լուրջ գործ կատարել Պարսկաստանում, — նա հօ կարող էր մի փոքրիկ խլրտիւն, մի փոքրիկ իրարանցում, մի ոննշան կոտրած տռաջբերել շահի մահմեդական և քրիստոնեայ հպատակների մէջ:

Եւ ահա զիսլօմատիալի համար մի լաւասիթ, մի օրինական պատճառ հարց բարձրացնելու, բանակցութեանց մէջ մտնելու, բաւարարութիւն պահանջելու, — մի խօսքով՝ արհետական կերպով բարձրացած հարցը այնքան բաշքշելու ու ձգձգելու, մինչև որ յարմար ժամանակը գայ, հասնի խօսքից գործի անցնելու, և գրչից զէնքին զիմելու:

Ուշագրութեան արժանի է, որ իրք Օրին Շամախումն էր, յանկարծ այնտեղ մի խլրտիւն ծագեցաւ, յայտնի չէ ինչից:

Խանին սպանելու նպատակաւ՝ նրա բնա-

կարանի վրայ յանկարծական յարձակում գործեցաւ:

Դեսպանութեան ապահովութեան համար Օրին խկոյն եկթ Մուսաստանից հետը վերցըրած 12 թնդանօթներն ել լարեց և շարեց, և Եւրոպայիցը բերած զէնքերափս էլ իր մարդկանց ու իր համակիրներին զինեց:

Սակայն խանը կարողացաւ չարիքը իր արմատումը խեղդելով՝ ապագայ անակնկալների առաջն առնել:

Իէ.

Ինչ և էլ որ լինի՝ Օրիի զեսպանութիւնը Աւստրիոյ կայսեր նպատակից աւելի ձեռնտու և յարմար էր գալիս Պետրոս Մեծի նպատակին:

Այդ զեսպանութեան միջոցաւ նա ինքն էլ ուզում էր շագանակներ հանել Պարսկաստանում տեղի ունեցող կրակի միջից:

Պետրոս Մեծը կարող էր մինչև անգամ ոչ թէ շագանակ, այլ ընկյուներ հանել: Զէ՞ որ Պարսկաստանը Մուսաստանին աւելի մօտ էր, քան Գերմանիային ու Աւստրիային:

Զէ՞ որ Զուղայի հայ վաճառականութիւնն էր, որ Հնդկաստանից մի մեծարժէք, թանկազին գահ նւէր էր ուղարկել ուռւաց Ցարին: Զէ՞ որ Մուսիայում կազմւած և հովանաւորւած «Առևտրական» ընկերութեան շնորհիւ էին դի-

գել Զուղայի վաճառականներն իրենց ահազին կարողութիւնը:

Պետրոս Մեծի նպատակի մասին իմ այս ասածները լոկ խօսքեր չեն: Այլ այնպիսի են թաղրութիւններ, որոնք մի քանի տարուց յետու իրականացան, պատմութեան փաստ դարձն:

Բայց որսվիետե դրանք Օրիի անձնաւորութեան հետ կապուած չեն, այլ նրա յաջորդների անձնաւորութիւնների հետ, ուստի առայժմը*) ես զանց եմ առնում այդ պատմական փաստերն:

Այսքանը միայն կասեմ, որ Օրիի անակնկալ մահը միշտանի տարով կանխեց այդ պատմական դէպքերն:

Իսկ այդ պատմական դէպքերի նախապատրաստութեան համար Պետրոս Մեծը մի գաղանի հրահանգ ես տւած էր Օրին, — այն է՝ համոզել էջմիածնի կաթողիկոսին, որ անձամբ կամ գրութեամբ դիմելով ուստաց կայսրին՝ խնդրէ նրան պարսկահայերին իր հովանաւորութեան տակ առնելու:

Եւ Օրիի այդ նպատակու արած աշխատանքը իգուր չանցաւ:

Ճշմարիտ է, էջմիածնի կաթողիկոսը այս անգամ ևս մերժեց Օրիի առաջարկը, սակայն

Դրանց մասին ես պատիւ կունենամ մի առանձին գասախօսութիւն կարդալ իմ յարդելի ունկնդիրների առաջ:

Նրա փոխարէն Աղւանից կաթողիկոսը մեծ սիրով ընդգառաջեց Օրիի առաջարկութեանը: Եւ, ինչպէս տեսանք, երկու եպիսկոպոսների հետ Օրիին ընկերացաւ մինչև Աժգարիան, այնտեղից Մօսկուա գնալու Պետրոս Մեծին ներկայանալու համար:

Եւ Օրիի անակնկալ մահւան պատճառաւ Աղւանից կաթողիկոսը յետ գարձաւ հայրենիք, որտեղից սակայն, միշտ փայփայում էր այդ դրութիւնը:

Գալով Օրիի դեսպանութեան անվտանգ և առանց որեէ միջնադէպի Պարսկաստանից հեռանալուն, աւելի ճիշտ՝ հեռացրած յինելուն, այդ պէտք է վերագրել Հիւսէին շահի և նրա աւագանւոյն ճարպիկութեանը:

Իրանի գահակալը շատ լաւ նկատեց, որ իր մայրաքաղաքում և իր աշքերի տառջ՝ ուռաւական և եւրոպական դիպլոմատիան միմեանց հետ պայքար են մզում, և որ այդ պայքարը կարող է մեծ ծաւալ ստանալ ի ֆլաս երկրին, — ուստի ամենայն քաղաքավարութեամբ Օրիին ճանտպարհ ձգեց:

Պատմութիւնից յայտնի չէ, թէ Հռոմի պապի, Աւստրոյ կայսեր և Պֆալցի իշխանի նամակներին ինչ պատասխան գրեց Հիւսէին շահի: Բայց այն պատասխանը, ինչ որ նա Պետրոս Մեծին գրեց, ինչպէս տեսանք, շատ վիրաւուկան էր:

Իրանի պետի կողմից դա ուղղակի մի ծա-

դըր էր դէպի մուսիոյ վեհապետը:

— ի՞նչ բանի արդեօք վերագրել Հիւսէին
Շահի այս վարմունքը:

Իմ կազծիքով Շահի այս վարմունքը պէտք
է վերագրել Սպահանում եղող եւրոպական տէ-
րութիւների աշխարհական և հոգեորական գոր-
ծակալների ինտրիգներին, ոռւսատեցաթեանը:

ԼՇ.

Արդէն մենք տեսանք, թէ այդ գործակալ-
ներն որքան աշխատեցան Շահի հանդէպ Օրիի
մուտքը Սպահան խափանելու:

Բայց եթէ նրանց չյաջողւեց զեսպանու-
թեան մուտքը խափանելու, — այդ գես չէր նը-
շանակում, որ նրանք չպիտի աշխատէին զես-
պանութեան նպատակը ի գերե հանելու: Ան-
շուշան նրանք կտրծում էին, որ Պետրոս Մեծի
նամակում այսպիսի խորհուրդներ, առաջարկ-
ներ, թերես և պահանջներ կան, որոնցմով եւ-
րոպայի վեհապետների շահերը այս կամ այն
կերպով կարող էին վնասել: Նրանց ազգեցու-
թիւնը կարող էր նազել յօդուտ ոռւսական շա-
հի և ազգեցութեան: Ուստի և ամեն միջոց ի
գործ դրին ոռւսական դիպլոմատիայի հանդէպ
Շահի գոները փակել:

Բայց երբ տեսան, որ Ռուսիոյ կայսեր
մտսնաւոր խնդիրը և նրա անունով եկած գես-
պանութիւնը բոլորովին չեն համապատասխա-

նում միմեանց, այն ժամանակ նրանք էլ խոր-
հուրդ տւին Շահին՝ իր պատասխանը ևս մաս-
աւորեցնել, գրելով թէ՝ իր հպատակների մէջ
մի քանի յիմարներ կան, որոնք պէտք է կա-
խաղան բարձրանային, բայց ի պատիւ մուսիոյ
կայսեր միջնորդութեանը՝ ներման են արժա-
նանում այն պայմանաւ սակայն, որ միւս ան-
դամ յիմարութիւն չանեն:

Բայց այդ յիմարներն ովքեր էին և ի՞նչ
էր նրանց յիմարութիւնը:

ԼԹ.

~~Մենք արդէն աեստնք, որ հայկական ան-
կախիւնութիւն ձեռք բերելու սկզբնական
միաքը՝ Հայաստանի Ունիթօսներից ներշնչւե-
ցաւ հայերին: Տեսանք թէ՝ ինչպէս այդ ունի-
թօները, նմանապէս արևմտքի նրանց զործա-
կիցները, — Պատեր Պօտիան և միւսները, — Զեր-
մօրէն աշխատեցան Հայաստանից եւրոպա պատ-
գամաւորութիւն ուղարկելու գործին, միլիքնե-
րի համար աղերսագրեր գրելով՝ կամ նրանց
հալերէն գրածը լատիներէնի և ֆրանսերէնի
թարգմանելով, յանուն հայոց մելիքների և հա-
յոց կաթողիկոսի Հսոմի պապից նամակներ բե-
րելով և այն:~~

Սակայն երբ Սւասրիոյ կայսեր և Պֆալցի
իշխանից յոյսը կարելով՝ Օրին Ռուսիոյ կայսեր
գիմեց, երբ կաթոլիկ եկեղեցւոյ պետին թո-

զած՝ նա պրօվասլաւ եկեղեցւոյ պետին ապաւինեցաւ, — այն ժամանակ ահա Հռոմի թէ հոգեոր և թէ աշխարհիկ ագենտները իրենց լեզուն և իրենց վարմունքը գէպի Օրին՝ փոխեցին և բացարձակ սկսեցին թշնամանել ինչպէս նրան, նմանապէս և հայ մելիքներին: — Եւ այդ թշնամանքը նրանք սկսեցին արտայայտել նախքան Օրիի գեսպանութեան Սպահան հասնելն և ապա այնուհետեւ շարունակ:

Ունիթօններն էին, որ Շահին և նրա աւագանիներին հաղորդել էին Օրիի Եւրոպայից գալն ու վերադառնալն. Օրիին Ռուսաց արքունիքին տւած գեկուցագրերի բովանդակութիւնը, Միրօն Վասիլեվի Մոսկվայից Էջմիածին և Գանձասար գալն ու վերադառնալն, Օրիի գեսպանութեան ներքին միտքը, մի խօսքով՝ Օրիի ամբողջ գործունէութեան. լի ու լի նկարագիրը:

Իոկ այդ գործունէութիւնը, իբրև մի փըռուն, անիրագործելի բան, Հիւսէին Շահի տչքում, իսկապէս որ մի «յիմարութիւն» էր: Եւ նա արգէն որոշել էր այդ «յիմարներին» կախագան բարձրացնել, որպէս պետական յանցաւորների, բայց ստանալով Պետրոս Մեծի նամակը՝ փոխեց իր որոշումը, ի հարկէ, մելիքների նկատմամբ: Իոկ Օրին՝ բնական է՝ որ Շահըն ոչինչ չէր կարող անել, թէկ համոզւած էր, որ այն բոլոր շարժումների պարագլուխը նա էր:

Խ.

Այսպիսով Օրին թէկ իրանի պետի ձեռքից ազատւած էր, բայց նրա անունն ու գործը ազատւած չէին Հռոմի գործակալների ձեռքից: Եւ սրանք իրանց նամակներում և գրւածներում շարունակ քաշքում ու ծամծմում էին Օրիի անունը՝ անւանելով նրան «բախտախնդիր», «սարերայ», «շահամոլ», խոռվարար», և այն:

Դրանցից ամենայայտիներն են Ռիքարտ, Վուլֆ և Կրուսինսկի անունով ճիզվիտներն: Վերջինս Օրիի գեսպանութեան ժամանակ Սպահանումն էր գտնւում, ուստի և շատ աննպաստ կերպով է խօսում Օրիի վրայ, և նրա գործուծունէութիւնը վատ դրյներով է նկարագրում:

Դրանց հաղորդած սուտ ու մուտ տեղեկութիւններից՝ վերջերում օգտւեցան և ուրիշները և նոյնպէս զպարտեցին Օրին: Անզիտակցարար վերջիններիս թւին պատկանում են Գէջէլ և Լէանար անունով ճիզվիտները:

Մի ալ ճիզվիտ՝ Ստեփան Ռօշկա անունով՝ տառւմ է իբր թէ Օրին կռւած է եղել իր ընկեր Մինաս վարդապետի հետ և թէ սա շատ աննպաստ բաներ է զրել: Օրիի մասին: Եթէ Հռոմի այս ամեն գործակալների գրւածների մէջ հատ ու կէնտ ճշմարտութիւններ գտնւեն էլ անզամ, — այնու ամենայնիւ նրանք արժէք

չունին: Վասն զի ամենից առաւել մեծ և զուտ ճշմարառութիւնն այն է, որ վերոյիշեալ ճիզվիաները դիմաւմիք աշխատել են նուասացնել եւ անահանակել Օրիին և նրա գործունեուրինը, որից ակնկալած օգուտի փոխարէն՝ այժմ, ընդհակառակը, վասն կարող էին ունենալ Հոռմէական եկեղեցւոյ և կաթոլիկ պետութեան, — Առարիոյ, — շահերը:

Եւ ահա Օրիի օրերիցն սկսած՝ երեան եւ կաւ և արծարածւեցաւ մինչև մեր օրերը՝ այն գաղտնի ու յայտնի մըցակցութիւնը, որ կայ եւրոպական տէրութիւնների և Ռուսաստանի մէջ և ամեն անգամ երեան է գալիս, երբ խօսք ու ցանկութիւն է յայտնուում արհելքին, և մասնաւորապէս Հայաստանին, ափրապեալու ամար:

Եւ եւրոպական պետութիւններն ու Ռուսաստանը՝ իրակից այդ զուտ յաղախական նաշիւնները՝ Օրիի օրերիցն սկսած մինչև այսօր՝ պատրւակում են՝ քրիստոնէութեան, մարդասիրութեան կամ հայասիրութեան անւան տակ, — բառեր, որոնց գոյութիւնը բացարձակաբար ժըլստում է քաղաքագիտական աշխարհում, Բայց որոց միամիտ հայութեանը զո՞ն է գնացել և զնում է շարունակաբար:

Դառնում եմ այն հարցին՝ թէ Օրին ի՞նչ դրամական միջոցներով էր գործում:

ԽԱ.

Պատանի հասակում առաջին անգամ Եւրոպա գնալիս՝ մելիք-Էսրայէլի որդին, հարկաւ, շատ կամ քիչ փող կաւնենար հետը:

Այնուհետեւ առաջին չորս տարիներում, երբ նրա հայրը գես կենդանի էր և որդուն, թերես, համակներ էր գրում և պատասխան ստանում, — Օրին կարող էր դարձեալ շատ կամ քիչ, նըպաստ ստանալ հօրիցը: Բայց երբ վիրջինս մեռաւ և Օրիի յարաբերութիւնը այն աստիճան խցւեցաւ հայրական տնիցը, որ նրան կորած կամ մեռած էին համարում, — ուրեմն հայրենիքից դրամ ստանալու մասին՝ խօսք չէր կարող լինել,

Ուրեմն՝ Օրին ի՞նքն էր պահում իր գլուխը: Եւ կարող էր, որովհետեւ ժիր, գործունեայ երիտասարդ էր և իրան առիացի տեղովն՝ եւրոպական, — ֆրանսիական, — բանակի սուպալթերն օֆիցեր էր գարձել: Ապա գերմանական 4 քաղաքներում կոմիսարի սլաշտօն էր վարել: — Վերոյիշեալ պաշտօններն վարելիս՝ Օրին, հայկական ողբոյն յատաւկ սակաւագետութեամբ և ինայողութեամբ, շատ կամ քիչ, անտեսութիւն արած կլինէր անշուշտ: Բաֆֆին ասում է*), որ Օրին «Հնդկաստանցի մի ճարպիկ առ-

*) Կամս. Մելիք. եր. 22.

Կտրական էր»։ Անգեղակոթի մելիքների համակում եղած մի ակնարկութիւնից երևում է, որ, արդարե, Օրին առևտրական մի գործով պարապելիս է եղել Եւրոպայում։ Ունիթուներից մէկն էլ,—կրուսինսկի ճիզվիթը, —առում է, որ Օրին Փրանսիական բանակին սուրճ, զահվա մատակարող էր։

Ինչ էլ որ լինի, իր քաղաքական ծրագրի իրագործման համար՝ դէպի Ռուսաստան մեկնելիս՝ բացի Դիւոլդորֆում թողած կայքերից հբացի Պետրոս Մեծին, նրա կնոջը և ոռւս աւագանիին բերած արժեքաւոր նւէրներից՝ իր զբանում 9500 կանսիկ սոկեդրամ ունէր։

Եւ այդ գումարովն էր, որ Օրին հոգաց՝ 1) ոռւս արքունիքի կողմից Միրօն Վասիլի պաշտօնէի ճանապարածախքն ու սննդադրամը։

2) Նոյն արքունիքի պահանջմամբ՝ դարձեալ՝ Եւրոպա մեկնող Նազար Արէխովիչ ազգանուով մի այլ պաշտօնէի ճանապարածախքն ու սննդադրամը։

3) Եւրոպաից իր հետ բերած 10 մարդկանց ապրուսոր Ռուսաստանում։ Ճշմարիտ է՝ Պետրոս Մեծի հրամանաւ՝ Օրին արքունական թոշակ նշանակւեցաւ։ Բայց թոշակը շատ չնչին էր, —օրական ընդ ամենը 48 կոպէկ։

4) Հոլանդիայում զնուած գէնքերն 22,000 բուբլու արժողութեամբ՝ Օրին իր գրանիցն էր հոգացել։

5) Գոլովին Բոյարին գրաւելու համար՝

բացի իրան խոստացած 20,000 սոկուց (որ մելիքներն էին վճարելու), Օրին Գոլովինի թարգմանչին, կամ գէթ թարգմանիչի անունով, կանոնիկ 4,000 սոկի վճարեց իր գրպանից։

Այսպէս որ 1704 թւին Մոսկվայից Պֆալցի իշխանին ուղղած մի համակում, Օրին հետեալ վշտալի առղերն է աւելացնում, եօրը սարի շարունակ այս ու այն կողմն լինելով եւ սանցնելով՝ ևս իմ ամբողջ կարողութիւնը ծախսեցի, եւ այժմ պարտի մեջ իրած լինելով՝ կնոցս և զաւակներիս ինդա ու աետերուց եմ քողելո։

Խ7.

Բայց չնայած իր այս զբամական նեղ վիճակին, —այնուամենայնիւ Օրին պարագով հոգաց՝ 6) 50 հոգուց բաղկացած իր դեսպանութեան ծախքն, իւրաքանչիւրին առանձին-առանձին ոսճիկ վճարելով։

Բայց սոճիկներից Օրին իր հաշւովն էր պարապատել, 7) շքախմբի անդամների համազգեստներն։ 8) Նրանց սննունդն ևս Օրին ինքն էր հոգում։

Թուս կառավարութիւնը Օրին միմիայն 12 թնդանօթ էր տւել և նիզօվօյ նաւահանգըստում 2 նաւ գեսպանութեանը Աժգարխան հասցնելու։

Դարձեալ՝ 9) Օրին իր հաշւովն էր բերել

Պարսկաստանից այս 20 գերգաստանը, որ մետաքսագործութիւնը ծաղկեցնելու էր Ռուսաստանում:

Վերջապէս Օրին իր հաշւովն էր ձեռք բերել Պարսկաստանում Ռուսաց կայսրին և նրա աւագանիին նւիրելու համար՝ 10) 31 հատ ընտիր ձիեր՝ իւրաքանչիւրը 400-ից մինչեւ 200 ըուբլի արժողութեամբ, իրանց սարքերով: 11) Բայց այդ ձիերից Օրին Պարսկաստանից բերում էր նաև 30 տեսակ՝ 242 հատ հնդկական և պարսկական թանկագին գորգեր, շալեր, մետաքսեայ կտորներ, բարձեր, առիւծի և ընծի մորթեր, տակառներով Շիրազի ընափեր զինի, ազնիւ տեսակ չոր մրգեղէններ 20 հակ էլ մետաքսի կօկօն*):

*). Բաֆֆի ասու Շեամբ (Խամս. Մելիք. եր. 25) «Օրին վերադառն Խուսաստան տանելով իւր հատ 200,000 ըուբլի արժեք ունեցող ընծաներ Պարսկաց Շահի կողմից Պետրոս Ա'նձին»: — Օրին բերած ապրանքի և ձիերի արժէքը կառագ էր 200,000 ըուբլու հասնել, բայց զրանք Շահի կողմից չէին ուղարկւում Պետրոս Մեծին: Բաֆֆին պատրած է: Օրին բերած ձիերից 4-ը Աժդրախանի նու Հանգապետը իրան համար վերցրեց: Երեքը Լէզուները թէկ փախցրին, բայց յետոյ ձիերի արժէքն ատանալով՝ վերադարձրին: Մնացիալ ապրանքների ու մասը փշացաւ Գաւրին մետաքսի հակներին, — նրանք էլ մինչեւ 1736 թիւը Ղազանի մաքսատանը մնացին, մինչեւ որ Մինաս վարդապետի ջանքերով գուրս՝ բերւեցին և Սափար Ղասիլիվ մի հայ վաճառականի ձեռքով վաճառելով գոյացած փողի մի մասը մաքս վճարեցին, մնացիալը Օրին պարտատէրներին հասցըին:

Այս ամենը Օրին տանում էր կայսեր և աւագանիին նւիրելու նպատակաւ:

Բայց որովհետեւ Օրին ճանաչւած էր իրեւ միջազգային, այլ ոչ ուռատական դեսպան, ուստի ճանապարհին պատահած քաղաքների և սահմանազվի ուռւ իշխանաւորները Օրին մեծամեծ նեղութիւններ էին պատճառում, մաքս և ուրիշ զանազան պահանջներ անելով, ապրանքներն զրաւելով և այլն:

Խ7.

Ուռւ իշխանաւորների այս վարմունքն այն աստիճան վշտացնում էր Օրին, որ նա, գուքս Գոլօվկինին ուղած մի նամակում նկարագրելով ուռս պաշտօնեաներից կրած իր նեղութիւնը՝ շարունակում է՝ «ես թագաւորի հրամանով եմ եկեալ իրանու երկիրն. հիմա զլիսով ու ապրանքով էլի թագաւորին ծառայելու եմ գալիս, թագաւորին ոչ մի փրփքազէն ինձ ապրանք չեն տւել, չեմ զիտում մեր ապրանքն ինչ կողմանէ են զաւթում» (զրաւում):

Երեկի այս նամակն ցանկալի արդիւնք չունեցաւ: Աւստի Օրին, հիւանդ տեղովը, մի օր վերկացաւ և ուղղակի Պետրոս Մեծին էլ մի նամակ գրեց, որի մէջ կարդում ենք և հետեւալ տողերն՝ «ԵՇՈՒ թւականից մինչեւ այսօր՝ աւելի քան 9 տարի ժամանակամիջոցում» ես Զեր Մեծութեան գանձարանին ոչ մի վնաս

չհասցրի: Զեր մեծութեան կողմից՝ ինձ համար սահմանւած թոշակը՝ ընդ ամենը 5 ալթին էր (48 կոպ). օրական, մինչդեռ ինձ և իմ մարդկանց ես պահում և խնամում էի իմ անձնական եւ պարտ վերջրած փողերով»: թէ արդարի Օրին պարտքով էր ապրում վերջերում, և պարտքով իր մհծամեծ ծախքերն հոգում, — յետու առուգւեցաւ Մինաս վարդապետի Պետրոս Մեծին տւած զեկուցագրով, որի մէջ գնահատելով Օրիի անունով կայսեր ընծայւած ձիաներն և միւս ապրանքներն, — վարդապետը խնդրում է շնորհել իրան ապրանաց արժեքն, որպէսզի կարելի լինի թէ Օրիի պարտքերն վըճարել, և թէ Դիսլորֆում աղքատութեան մէջ մնացած Օրիի ընտանիքին սննդագրամ ուղարկել: Բայց երեկի Մինաս վարդապետի այս խընդիրը յարգւեցաւ, կամ, գուցէ մասամբ և եթ յարգւեցաւ: Որովհետեւ Օրիի մահւանից 5 տարի յետոյ էլ՝ նրա ւարտատէրներն, թէ Ռուսաստանում, և թէ Պարսկաստանում, Մինաս վարդապետից, իբրև Օրիի ընկերից ու գործակցից, պահանջներ էին անում:

Բանն այնաեղ հասաւ, որ երբ 1716 թւ ւականում Մինաս վարդապետը՝ Պետրոս Մեծի մի դաշտնի հրահանգով՝ Պարսկաստան գընաց, — այնաեղի Օրիի պարտատէրներն՝ նրան բանտարկել տւին, ուր նա 2 ամիս մնալուց յետոյ՝ հազիւ հազ, մի կերպ աղատւեցաւ:

Այսպիսով՝ Օրիի անւան և գործունէու:

թեան նւաստանալուն օգնեցին մի կողմից նըրսա պարտատէրներն՝ նրա շքախմբի անդամներից սկսած, մինչև մուրհակաւ պարտք տւողները, Միւս կողմից՝ ինչպէս տեսանք՝ Հռոմի գործակալ ձիգւիթներն,

Սակայն պարտատէրներից և ձիգվիթներից էլ աւելի վատթար վարւեցան, բացի ուռու փոքր պաշտօնեաներից, նաև մի քանի բարձրաստիճան պաշտօնեաներ և յատկապէս Ղազանի նահանգապետ Աբրաքսինը:

Օրիի մահւանից յետոյ, այն է 1711 թւի նոյեմբերի 7-ին, նահանգապետ Աբրաքսինը կայսեր ուղարկած իր տեղեկագրի մէջ, ի միջի այլ մեղադրանքների՝ Օրիին նա և յաղախական յանցաւոր է դուրս բերում:

Ահա ինչու համար:

ԽԴ.

Օրիի գեսպանութեան 50 հոգի անդամներին՝ Մոսկվայի ոստիկանութիւնը նախապէս մէկ-մէկ կանչեց, հարց ու փորձի ենթարկեց, ով, որտեղից և ում հպատակ լինելն ստուգեց և առողջին-առանջին արձանագրութիւններ կազմեց, և ի բանց կամ իրանց երաշխաւորներին ստորագրել տւեց և ապա արձակեց՝ յայտնելով որ ոստիկանութեան կողմից արգելք չկայ այդ մարդկանց՝ Հռոմի Պապի և Պֆալցի իշխանի գեսպանի (Օրիի) հետ Պարսկաստան գնալու:

Ոստիկանութեան կատարած քննութեամբ
երեցաւ, որ ամեն երկրից մարդիկ մտել էին
գեսպանութեան մէջ, բացի Շվեդացիներից,
որոնցից Օրին ոչ ոքի չէր վերցըել, զիտնալով
որ Ռուսաստանը պատերազմի է բռնւած այդ
ազգի դէմ:

Երբ գեսպանութիւնը Աժդարիսան հասաւ՝
տեղւոյն ոստիկանութիւնը՝ նոր ի նորոյ քննու-
թեան ենթարկեց նրա պնդամներին և ոչ մի
արդելք չգտնելով՝ թոյլ տեղ որ սահմանն ան-
ցնեն:

Դեսպանութիւնը գնաց Պարսկաստան և վե-
րադարձաւ Աժդարիսան, ուր, ինչպէս տեսանք,
Օրին մեռաւ: Եւ ահա, յայտնի չէ թէ ի՞նչ
պատճառաւ կամ ի՞նչ նպատակաւ, նահանգա-
պետ Արքաքսինը վերկացաւ և կայսեր գրեց
իրեն թէ՝ գեսպանութեան անդամների թւում
16 հոգի շվեդացիներ են եղել որոց Օրին թագ-
ցըել է Մոսկայի ոստիկանութիւնից և փոխա-
նակ Շվեդիայի՝ ուրիշ երկրի հպատակ է արձա-
նագրել տւել նրանց:

Եւ թէ՝ իր այս վարժունքը՝ Օրին իրեն թէ
խոստովանել է իրան, Արքաքսինին, վերագրե-
լով այդ վարժունքը՝ ոչ թէ գաւաճանութեան
կամ խաբերայութեան, այլ իր անտեղեակու-
թեանը ռուս լեզ ին և կարգերին:

Օրիի երկրորդ յանցանքը, ըստ նահանգա-
պետ Արքաքսինի այն է՝ որ Պարսկաստանում
ամեն տեղ որտեղից անցել է Օրին, իրան ան-

ւանել է ոուսաց րազաւորի դեսպան, և այն-
պիսի անկարգութիւններ է արել, որոնք,—զբ-
րում է Արքաքսինը,—Զերդ Մեծութեան անա-
նը չիին կարող պատի քերել»:

Մի խօսքով, սիրելի ընթերցող, եթէ Օրին
մեռած չլինէր, գուցէ նա էլ, իշնորհա գեներալ
Արքաքսինի նոյն վիճակի համնէր, ինչ վի-
ճակի որ, իշնորհա գեներալ Պասքեչչի, հասաւ
19-րդ դարու սկզբում, մի այլ հայրենասէր —
Ներսէս եպիսկոպոս Աշտարակեցին³⁾: |

Ծանօթներիցս մէկը ինձ յայտնել էր, որ
ինքը իսրայէլ Օրիի շիրիմը տեսել է Աժդարիսանի
ու Պողոս Գետրոս եկեղեցւոյ գտւթում և կարդացիլ
տապահագիրը:

Որքան որ այս տեղեկութիւնը ինձ անհաւտառ-
լի թւաց, —այսուամենայնիւ սև իմ բարեկամ պլ. Իս-
րայէլ Յեղարեանցին զիմելով, խնդրեցի որ իր Աժ-
դարիսանի բազմաթիւ ծանօթների միջոցաւ՝ ստու-
գել այս ինձ հասած լւորը: Պ. Յեղարեանը զիմել էր
արժ. Սարգսի քահանայ Ասլաննեանցին, որի նամակից
այժմ երևում է որ իսրայէլ Օրիի թազման տեղը ան-
յայտ է: Եւ չնայած սրբ. Արիստակէս եպիսկոպոսի և
այլոց արած հետազօտութիւններին և պեղումներին, —
ցարդ անկարգելի է եղել գանեւ: Օրիի գերեզմանի տե-
ղը: Բայց հաւանական է, —գլուխ է արժ. Ասլաննեա-
նը, —որ իսրայէլ Օրին թազւած լինի կամ Ս. Աս-
տածածին, և կամ աւելի շուռա, Ս. Կատարինէի եկե-
ղեցւոյ բագում, ուր սովորաբար թաղելիս են եղել
հայ նշեցեաները որովհետեւ, Ս. Կատարինէի եկեղեցին
քաղաքից դուրս լինելով՝ միևնոյն ժամանակ՝ հանգս-
տարանի եկեղեցւոյ տեղ է ծառայիր:

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Զէնիաթ—դէնիաթ
2. Գլխագին
3. Ապօրինի զաւակը
4. Գինեղն
5. Ռաֆֆի «Կայծերը»
6. Կացինը քարին կպաւ
7. Մտորումներ
8. Պատմական Քաղւածներ Ա. պրակ.
9. " " " Բ. " "
10. " " " Գ. " "
11. " " " Դ. " "
12. " " " Ե. " "
13. " " " Զ. " "
14. " " " Է. " "
15. Իսրայէլ Օրին և իր քաղաքական ծրագիրը Գինն է 25 ԿՈՊ.

Դիմել Բակу, Պրոտոիեր Եгиշե Գեղամյանց.

«Ազգային գրադարան»



N10418242



6855